

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ ՏՈՆԱԼՍԻ ԹՐԱՄՓԻ ԹԵԿՆԱԾՈՒՔԻՆԸ

Միացեալ Նահանգները բոլորեց տագնապալի շաբաթ մը, որու ընթացքին միջոցային հարցերը դարձեալ գրաւեցին երկրի ուշադրութիւնը: Լիւիզիանայի եւ Միսիսիպիի մէջ երկու սեւամորթ քաղաքացիներու սպանութիւնը՝ ոստիկաններու ձեռքով, զանգուածային բողոքի ցոյցերու ալիք յառաջացուց երկրի տարածքին: Այդ ցոյցերէն մէկու ընթացքին, Տալասի մէջ սեւամորթ նախկին բանակային մը կրակ բանալով սպաննեց 5 ոստիկաններ, վիրաւորելով տասնեակ մը ուրիշներ:

Այս օրերուն երբ երկիրը կարիքը ունի ժողովուրդը իրար մօտեցնող եւ համերաշխութիւն քարոզող ձայներու, Յանրապետական կուսակցութիւնը, Յուլիս 18-ին սկսող իր համագումարով պիտի գայ պաշտօնականացնելու նախա-հաղական թեկնածութիւնը՝ գործարար Տոնալտ Թրամփի: Անձի մը, որ իր ընտրարշաւը կառուցած է ժողովուրդներու միջեւ պատերկառուցելու եւ երկրի տարբեր հատուածները իրար դէմ հրահրելու քարոզչութեան վրայ:

Այս թեկնածութեան հակադրուած են եւ ոչ միայն Դեմոկրատներ ու անկախներ, այլ նաեւ մեծ թիւով հանրապետական ղեկավարներ, որոնք չեն կրնար հաշտուիլ այն իրողութեան հետ, որ Տոնալտ Թրամփի նման անձնաւորութիւն մը, որ շահագործելով որոշ խաւերու մտահոգութիւնները, յաջողեցաւ առեւտրային իրենց կուսակցութիւնը ու անոր սկզբունքները: Յանրապետական նախկին նախագահներ եւ նախագահի թեկնածուներ, որոնք շարքին հայր եւ որդի ճորձ Պուլշերը, ճոն Մաքքեյնը, Միք Ռամսֆիլդ, ինչպէս նաեւ բազմաթիւ նախագահներ, գոնկրեւականներ եւ ծերակուտականներ յայտարարած են որ, ներկայ պիտի չգտնուին Յամագումարին, պառակտուած ան-նախընթաց երեւոյթ մը պարզելով կուսակցութեան պատմութեան մէջ:

Տոնալտ Թրամփի նախագահ դառնալու հաւանականութիւնը կը մտահոգէ նաեւ արտաքին աշխարհը, որ զարմանքով կը հետեւի ամերիկեան ներքին կեանքի ելուեցներուն:

Նախընտրական պայքարի ընթացքին Տոնալտ Թրամփի իրապարակային ելոյթները եկան յստակ դարձնելու շատ-շատերուն, որ ան չունի համապատասխան գիտելիքներ, նախագահի վայել պահուածք եւ հետեւաբար ատակ չէ դառնալու այս մեծ երկրի յաջորդ առաջնորդը:

Առայժմ այդ կը վկայեն նաեւ հանրային կարծիքի ուսումնասիրութիւնները, Տոնալտ Թրամփի տալով նախագահ դառնալու միայն 25 տոկոս հաւանականութիւն: «ՄԱՍԻՍ»

## Մերժ Սարգսեանի Վարչաւիոյ Մէջ Ունեցած Ելոյթ Ետք, Դարձեալ Կը Խօսուի Հողեր Վերադարձնելու Մասին

Վարչաւիոյ մէջ տեղի ունեցած ՆԱԹՕ-ի գագաթի ժողովի ընթացքին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ելոյթը՝ Ղարաբաղի ինքնորոշման դիմաց սթաթիւքն փոխելու մասին, ինչպէս նաեւ դիւանագիտական այն շփոթմանը որոնք աշխոյժօրէն տեղի կ'ունենան վերջին օրերուն, որոնք շարքին նաեւ Փութին-Օպամա հեռախօսային զրոյցը՝ Լեւոնային Ղարաբաղի հարցին շուրջ, եկան ձգելու այն տպաւորութիւնը, որ մեծ պետութիւններու ճնշումներուն տակ, հայկական կողմը պատրաստ է, տակաւին չչստակեցուած տարածքներ վերադարձնելու Ատրպէյճանին:

Միւս կողմէ, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգեյ Լաւրով այցելութիւն կատարեց Պաքու, ուր հանդիպում ունենալով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ յայտարարեց, որ զարաբաղեան հարցի լուծումը խիստ մօտալուտ է:

Սերժ Սարգսեան իր ելոյթին մէջ յայտարարեց, որ Հայաստան խաղաղութեան եւ անվտանգութեան աշխոյժ ջատագով է



ՆԱԹՕ-ի գագաթի ժողովի մասնակիցները

տարածաշրջանին մէջ եւ միշտ հանդէս եկած է Արցախի հարցի խաղաղ կարգաւորումի դիրքերէն: Ան աւեցուց որ, նախագահներու վերջին հանդիպման ընթացքին շեշտուեցաւ, որ հիմնախնդիրը կարելի չէ լուծել ռազմական միջոցներով, այլ պէտք է պահպանել զինադադարի գործադրութիւնը: Սարգսեան Վարչաւիոյ մէջ տեսակցեցաւ իր Ֆրանսացի պաշտօնակից Ֆրանսուա Հոլանտի

հետ, քննարկելու համար երկկողմանի յարաբերութիւնները եւ շրջանային ու միջազգային զարգացումները: Սարգսեան շնորհակալութիւն յայտնեց Հոլանտին, հետեւողական աջակցութեան եւ կարեւոր դերակատարութեան համար: Ան նաեւ երախտագիտութիւն յայտնեց Հայոց ցեղասպանութեան ժխտումը

Շար.ը էջ 5

## Գերմանիոյ Վարչապետուհին Մերժած Է Էրտողանի Առաջարկը

Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրտողանի Գերմանոյ վարչապետուհի Անկելա Մերկելին յայտնած է, թէ գերմանացի խորհրդարանականներուն թող կու տայ այցելել ինչիւրիւքի ռազմականը, եթէ Գերմանիոյ կառավարութիւնը յայտարարէ, որ համաձայն չէ խորհրդարանի կողմէ վերջերս ընդունուած՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւին:

Ինչիւրիւքի ռազմական գերմանացի պատգամաւորներու այցելելու արգելելը նոր լարուածութիւն յառաջացուցած է թուրք-գերմանական յարաբերութիւններուն մէջ:

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարը փորձած է իրավիճակի լարուածութիւնը թուլացնել՝ յայտարարելով, թէ գերմանացի զինուորական պատուիրակութիւնները կրնան այցելել ինչիւրիւքի, սակայն քաղաքացիական անձերու այցելութիւնը նպատակաշարժար չէ:

Այս յայտարարութիւնը զայրացուցած է գերմանացի պատգամաւորներուն եւ Գերմանիոյ պաշտպանութեան նախարարին: Վերջինս յայտարարած է, թէ իրենք անպայման պիտի մեկնին ինչիւրիւքի եւ հանդիպին գերմանացի զինուորականներու հետ:



Անկելա Մերկել եւ Ռեջեփ Թայիփ

Լարուածութիւնը սկսած է ՆԱԹՕ-ի համաժողովի շրջագիծէն ներս Մերկել-Էրտողան հանդիպման ժամանակ, երբ Էրտողան յայտարարած է, թէ թող կու տայ գերմանացի պատգամաւորներուն այցելել ինչիւրիւքի օդային ռազմական, եթէ Գերմանիոյ կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարէ, թէ համաձայն չէ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող Պունտեսթակի բանաձեւի հետ: Անկելա Մերկել մերժած է էրտողանին՝ ըսելով, որ Պունտեսթակի որոշման դէմ կառավարութիւնը յայտարարութիւն չի կրնար ընել:

## Թուրքիա Խորհուրդ Կու Տայ Ֆրանսայի Ծերակոյտին

Պաշտօնական Անգարան յայտարարեց, որ ուշադիր պիտի հետեւի Ֆրանսայի Ծերակոյտին ներս ապագային կայանալիք գործընթացին՝ կապուած Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծին հետ, որ տակաւին ուժի մէջ չէ մտած: Այս մասին ըսուած է Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան պաշտօնական կայքէջին վրայ տեղադրուած յայտարարութեան մէջ:

Ըստ Թրքական կողմին, փաստաթուղթը իր ներկայ տեսքով հաւանական վտանգ կը ներկայացնէ «ազատ արտայայտուելու առումով»: «Կ'ակնկալենք, որ Ֆրանսայի Ծերակոյտը օրինագիծէն կը հեռացնէ այն տարրերը, որոնք չդի են արտայայտուելու ազատութեան սահմանափակման վտանգով», - ըսուած է Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

Յիշեցնենք որ, մարդկութեան դէմ եւ պատերազմական լանցագործութիւններու, որոնք շարքին՝ Հայոց ցեղասպանութեան հերքումին համար քրեական պատասխանատուութիւն սահմանող օրէնքը, Ֆրանսայի Ազգային Ժողովին կողմէ ընդունուեցաւ վերջերս:

Այժմ օրինագիծը ենթակալ է քննարկման Ֆրանսայի խորհրդարանի վերին պալատի՝ Ծերակոյտին կողմէ:

# ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Ղարաբաղեան «Կարգաւորման» Ամենահաւանական Սցենարը

### ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Ղարաբաղեան կարգաւորման գործընթացում ակնյայտօրէն ինչ-որ իրադարձութիւններ են տեղի ունենում, եւ ընդհանուր տպաւորութիւնն այնպիսին է, թէ ինչորի վերջնական կարգաւորումը բաւականին մօտ է: Ժիշդ է, վերջին քսան տարիների ընթացքում յաճախ է նման տպաւորութիւն ստեղծուել, բայց այս անգամ իրավիճակը փոքր-ինչ այլ է: Բանն այնտեղ է հասել, որ Փութինն ու Օպաման, լարուած յարաբերութիւնները մի կողմ դրած, հեռախօսով քննարկում են ղարաբաղեան կարգաւորումը: Ընդ որում՝ չփման գծում, կարելի է ասել, մեռելային լուծութիւն է: Եւ սա՛ ապրիլեան պատերազմից ընդամէնը երեք ամիս անց:

Հայաստանում էլ կարծես թէ գլխի են ընկել, որ «ինչ-որ բան այն չէ», եւ կարող է մարդիկ մի գեղեցիկ օր արթնանան ու պարզեն, որ իշխանութիւնները տարածքները վերադարձնելու որոշում են ընդունել: Գլխի են ընկել եւ փորձում են բողոքի ակցիաներ կազմակերպել, յայտարարութիւններ են հնչեցնում եւ այլն: Բայց՝ առայժմ առանց լուրջ յաջողութիւնների, որովհետեւ իշխանութիւնների

«դաւաճանական մտադրութիւնները» ուղղակի ապացոյցներ չկան: Անուղղակի ապացոյցներ՝ որքան ուզէք:

Խօսենք կոնկրետ օրինակներով: Ատրպէյճանը միշտ յայտարարում է, որ եթէ հնարաւոր չլինի ղարաբաղեան խնդիրը կարգաւորել (այսինքն՝ «գրաւեալ տարածքները» վերադարձնել) խաղաղ բանակցութիւնների միջոցով, իրենք դա կ'անեն զէնքի ուժով: Եւ ապրիլեան պատերազմը ցոյց տուց, որ կատակ չեն անում, կարող է իսկապէս էլ դիմեն այդ քայլին՝ գերտէրութիւնների լուռ համաձայնութեամբ կամ թաքուն հրահրմամբ: Ի՞նչ պիտի անէին Հայաստանի իշխանութիւններն այս իրավիճակում, եթէ մտադիր չեն տարածքային զիջումների գնալ: Ժիշդ է, պիտի պետութեան բոլոր միջոցներն ուղղէին պաշտպանութեան ամրապնդմանը: Բայց նրանք այդպիսի բան չեն անում: Տեսէ՞ք՝ դեռեւս 2015-ին որոշուել էր, թէ որքան գումար պիտի ծախսուի պաշտպանութեան վրայ 2017-ին, բայց ապրիլեան պատերազմից յետոյ որոշուել է այդ ծախսերը ոչ թէ աւելացնել, այլ դեռ մի բան էլ պակասեցնել՝ մօտ 6 միլիարդ դրամով: Իսկ սա միայն երկու բացատ-

րութիւն կարող է ունենալ. կամ իշխանութիւնները վստահ են, որ եղած ֆինանսաւորումը լիուրի հերք է պաշտպանութեան համար (թէեւ ապրիլեան պատերազմը հակառակն ապացուցեց), կամ էլ՝ վստահ են, որ Ատրպէյճանը նոր պատերազմ չի սկսի: Թէ ինչի վրայ կարող է հիմնուած լինել նման վստահութիւնը՝ կուսակցի ինքնազոհ: Յամենայն դէպս՝ ո՛չ Ալիեւի «ագնիւ խօսքի», ոչ էլ ռուսական կողմի հաւաստիացումների:

Միւս կողմից էլ՝ իշխանութիւններն արդէն բաց տեքստով են խօսում որոշ տարածքներ զիջելու անխուսափելիութեան մասին: Ու հաստատ՝ իրենց կամքով չեն խօսում: Եթէ բանակցութիւնների սեղանի շուրջ այդ հարցով համաձայնութիւն է ձեռք բերուել, կարելի է վստահ լինել, որ Հայաստանի իշխանութիւններին նաեւ պարտադրուել է կամաց-կամաց «հասարակութեանը նախապատրաստել» այդ զիջումներին: Ինչը եւ իշխանութիւններն անում են: Ժամանակ առ ժամանակ տարբեր տրամաչափի պաշտօնեաներ յայտարարում են, թէ այո, ինչ-որ տարածքներ պիտի զիջել, «մի թիզ էս կողմ, մի թիզ էն կողմ»՝ հակառակ չէ, ոչ բոլոր տարածքներն

ունեն ուղղակի արական նշանակութիւն, «ղարաբաղցիներն իրենք պիտի ասեն, թէ ինչ զիջումների են պատրաստ կարգավիճակի դիմաց» եւ այլն: Ընդ որում, ԼՂՀ իշխանութիւնների դիրքորոշումը նոյնպէս կարծես թէ մի քիչ փոփոուել է: Նրանք առաջուայ պէս յայտարարում են, որ «զիջելու չունեն», բայց նաեւ աւելացնում են՝ «հենց որ մեզ էլ ընդգրկէք բանակցային ֆորմատում, առաջընթաց կ'արձանագրուի»: Ակնարկը հասկացա՞ք: Միջնորդները, կարծում ենք, վաղուց են հասկացել:

Հիմա՛ ժամկէտների մասին: Սա ամենաբարդ հարցն է, որովհետեւ ընդամէնը 9 ամիս անց Հայաստանում ընտրութիւններ են, եւ եթէ Սերժ Սարգսեանը մինչ այդ որեւէ փաստաթուղթ ստորագրի, ՀՀԿ-ն խորհրդարանում յայտնուելու ոչ մի շանս չի ունենայ, իսկ Սերժ Սարգսեանը լրջագոյն շանսեր կ'ունենայ յայտնուելու բոլորովին այլ վայրում: Բայց արդեօ՞ք նրան կը յաջողուի համոզել միջնորդներին, որ չչտապեցնեն եւ համբերեն մինչեւ ընտրութիւնները: Հազիւ թէ, որովհետեւ մեծ է հաւանականութիւնը, որ ընտրութիւններում «յաղթելու» դէպքում նա կը դրժի խոստումը ու նորից կը սկսի ժամանակ ձգել: Դրա համար էլ ամենահաւանականն այն է, որ նրան կը ստիպեն փաստաթուղթ ստորագրել մինչեւ ընտրութիւնները՝ պայմանով, որ դա կը հրապարակեն միայն ընտրութիւններից յետոյ:

Եւ իհարկէ՛ հնարաւոր «ցնցումների» դէպքում աջակցութիւն կը խոստանան: Յամենայն դէպս՝ ԵԱՏՄ-ն նման «ցնցումներն» օպերատիւօրէն ն ճնշելու ստորաբաժանումներ ունի:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

## Համակարգն Անցել է Հակագրոհի

### ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Ապրիլեան պատերազմից յետոյ յաճախ է հնարաւոր լսել յայտարարութիւններ այն մասին, որ պատերազմի գլխաւոր դասն այն էր, որ մեզ պէտք է ուժեղ Հայաստան, արդիական Հայաստան, որպէսզի կարողանանք արդիւնաւէտ դիմագրաւել մարտահրաւէրներին:

Անվիճելի է: Բայց դա Ապրիլի պատերազմից յետոյ պարզ դարձաւ: Մինչ այդ պարզ չէ՞ր: Եթէ չլինէր Ապրիլի պատերազմը, պարզ չէ՞ր լինելու, որ մեզ պէտք է ուժեղ Հայաստան, արդիական, զարգացող Հայաստան: Թէ Հայաստանի «ուղենիշը» պատերազմն է եւ միայն պատերազմը կարող է ստիպել փոխել կեանքի ընթացքը, դադարեցնել այն մեղմ ասած անարդիւնաւէտ կառավարութիւնը, որ առկայ է եղել անկախութեան 25 տարիների ընթացքում:

Պատերազմը դաս չէ: Պատերազմը հետեւանք է: Ու դաս դառնալ չի էլ կարող: Կարող է դառնալ շաղակրատութեան հիմք, ճամարտակութիւնների պատճառ, բայց դաս դառնալ չի կարող: Պատերազմը խաղաղութեան «ծարաւի» զգացում է, ոչ թէ պետականութեան դասի աղբիւր: Պատերազմը խաղաղութեան ընթացքում դասի աղբիւրները ցամաքեցրած լինելու հետեւանք է:

Դա է վկայում Հայաստանի ներկայիս ընթացքը: Ապրիլի պատերազմից անցել է մի քանի ամիս, իսկ կա՞ր որեւէ հիմնարար փոփոխութիւն Հայաստանի կեանքում: Ի՞նչը այնպէս չէ արդէն, ինչպէս որ էր մինչեւ Ապրիլ:

Պաշտպանութեան նախարարութեան մի քանի պաշտօնակուցիւններն ու առաջին դէմքերի մի քանի ելույթներն են դասը: Իսկ նոյն ՊՆ-ում կատարուած մի քանի նոր նշանակումներն է՛լ վկայում

են այդ դասի մասին, երբ լաւատեղեակ մարդիկ պարզապէս գարմանում են, թէ ինչպէս կարող են տեղի ունենալ այդպիսի նշանակումներ, այն էլ այդպիսի ապրիլից յետոյ: Թէ՞ Յովիկ Աբրահամեանի համար պատուիրած 1000 տոլարանոց անուարողներն են դասը:

Հայաստանում իշխող համակարգն ունակ չէ դասի: Հայաստանի իշխող համակարգի համար դասը միշտ յաջորդ է, այսինքն դասը միշտ առջեւում է: Պատահական չէ, որ հենց դա էր դարձել ներհամակարգային թէժ պայքարի փուլի բրենդային արտայայտութիւններից մէկը՝ «այդ մասին յաջորդ դասին»:

Հայաստանի իշխող համակարգը չունի դաս քաղելու ոչ միայն ինտելեկտուալ, այլ նաեւ տեխնիկական հնարաւորութիւն, որովհետեւ այդ համակարգի վերարտադրութիւնն ու գոյութիւնը կառուցուած են հենց այն իրողութիւնների վրայ, որ առկայ են եղել Հայաստանում մինչեւ ապրիլ:

Խնդիրն այն չէ, որ իշխող համակարգը չի կարող դաս քաղել ու անել դրանից բխող փոփոխութիւններ: Խնդիրն այն է, որ իշխող համակարգը դիմադրելու է որեւէ փոփոխութեան, հետեւաբար դիմադրելու է ապրիլեան պատերազմի «գլխաւոր դասին»:

Դա առնուազն նշանակում է, որ փոփոխութեան դիմամիկան Հայաստանում չի լինելու մարտահրաւէրների դիմամիկային համարժէք: Ներկայում առկայ են մի շարք գործընթացներ, որոնք վկայում են այդ մասին, ընդ որում թէ ներքաղաքական, թէ արտաքին քաղաքական, թէ տնտեսական:

Որովհետեւ Ապրիլի գլխաւոր դասը զարգացած Հայաստան ունենալը չէ: Տարօրինակ է դա համարել դաս: Դա պէտք է լինի բնական նպատակ, ցանկութիւն, երազանք՝ բանական ու ողջախոհ որեւէ հասարակութեան, ժողովր-

դի, ազգի համար: Ապրիլի գլխաւոր դասն այն է, որ անհնար է հասնել դրան, եթէ չկայ ինքնիշխանութիւն, եթէ հասարակական, պետական կեանքի հիմքում ինքնիշխանութիւնը չէ որպէս ելակետային արժէք:

Ինքնիշխանութեան զգացումը սրուել էր պատերազմի օրերին, ինքնապաշտպանութեան բնազդի մղումով: Եւ պատահական չէ, որ այդ օրերին Հայաստանն իսկապէս փոխուել էր, ու համակարգն էլ գործնականում զրկուել էր փոփոխութեանը դիմադրելու հնարաւորութիւնից, ստիպուած լինելով արձագանքել հանրային տրամադրութիւններին: Հայաստանի հասարակութիւնը հասկացել էր, որ «դարաւոր փրկիչն» ու «դաշնակիցը» պայթել են փուչիկի նման, եւ Հայաստանի ու Արցախի անվտանգութիւնը ինքնիշխան կամքի յոյսին է:

Եւ այդ յոյսն արդարացաւ: Բայց, անցաւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեան սուր պահը, եւ դրա հետ մէկտեղ գործընթացները սկսեցին լղոզել ինքնիշխանութեան արժէքային ու ելակետային նշանակութիւնը, տեղը զիջելով տարածուած «ուճալ պոլիտիկին», որը այլ բան չէ, քան իրական քաղաքականութեան հայելային նենգափոխում:

Համակարգն էլ կամաց-կամաց սկսեց դիմադրել փոփոխութիւնների հանրային պահանջին, քայլ առ քայլ այդ հարցում դառնալով աւելի ինքնավստահ:

Հայաստանում կեանքի ընթացքի ու պետականութեան որակի հիմնարար փոփոխութեան համար անհրաժեշտ է հանրային գիտակցութեան մէջ ինքնիշխանութիւնը դարձնել խաղաղութեան ժամանակի արժէք, աշխարհայացքային ելակէտ, դարձնել գիտակցական բաղադրիչ, չլիցիւզել այն առաւելապէս ինքնապաշտպանութեան բնազդի ձայնից արթնանալու յոյսին:

«ԼՐԱԳԻՐ»



**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՅԵ ԱՁԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԵԿ-ի Միլիոնատեր Նախագահը Վստալ է Որ Իր Նախորդի Գործունեության Մեջ Արտառոց Դեպքի Չի Հանդիպել

Յովհաննես Յովսեփեանի Ընտանիքն Էլ Հարուստ է, Քանի Որ «Աստուած Է Տուել»

Պետեկամուտների կոմիտեի նախագահ Յովհաննես Յովսեփեանը վստահեցնում է՝ իր պաշտոնավարման ընթացքում, ուսումնասիրելով ֆինանսների նախարար Գաբրիել խաչատրեանի գործունեությունը ՊԵԿ-ի ղեկավարի պաշտոնում, չի հանդիպել «որեւէ արտառոց դեպքի, որը նպաստել է խաչատրեանի որդիների հարստացմանը»:



Պետեկամուտների կոմիտեի նախագահ Յովհաննես Յովսեփեան

առաջ «Հետք»-ը տեղեկություն էր հրատարակել այն մասին, որ ֆինանսների նախարարի որդիները 2010 թվականին 11 միլիոն դոլարով շքեղ առանձնատուն են գնել Լոս Անջելեսի վեսթվուդ թաղամասում եւ այժմ այն վաճառքի են հանել 35 միլիոն դոլարով:

Հայաստանի գլխավոր դատախազ Գեորգ Կոստանեանի յանձնարարություններ, ֆինանսների նախարար Գաբրիել խաչատրեանի որդիների մասին «Հետք» պարբերականի հրատարակումն ուղարկվել է Ազգային անվտանգության ծառայության՝ հետազոյ ընթացք տալու համար: Այդ մասին «Ազատությանը» յայտնեցին Գլխավոր դատախազու թիւնից, հրատարակելով այլ տեղեկություններ տրամադրել: Յիշեցնենք՝ մօտ մէկ շաբաթ

Պետությունը Չիմնաւորուած Թանկ Գնումներ Է Իրականացնում

«Ի՞նչն է խանգարում, որ նախարարութիւնները գնումներ կատարեն անմիջականօրէն բորսաներից, անհամեմատ ցածր գներով», - հարց է հնչեցնում Արտակ Մանուկեանը:

Չնայած տարիներ շարունակ բարձրաձայնուող մտահոգութիւններին, պետութիւնը շարունակում է միջնորդաւորուած գնումներ իրականացնել, ինչը բիւջէի վրայ բաւականաչափ թանկ է նստում: Այս մասին «Կիրակնօրյա վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հարցուման ժամանակ ասաց «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փորձագէտ Արտակ Մանուկեանը:

«Որեւէ բան չի խանգարում, որ, օրինակ՝ բենզինը, հնդկաձաւարը, որոնք յատկապէս ՊՆ-ի համար շատ կարեւոր ծախսային միաւորներ են, պետութիւնն աւելի ցածր գներով ձեռք բերի բորսաներից: Մինչդեռ, մենք կեղծ մոնոպոլիաներ ենք ստեղծում՝ այդ ապրանքները միջնորդներից գնելով», - նշեց փորձագէտը, մանրամասնելով՝ «Մենք հնդկաձաւարը ձեռք ենք բերում վերավաճառողից. Ռուսաստանից ինչ-որ մէկն այն գնում է եւ այստեղ պետութեանը վերավաճառում է մի քանի անգամ աւելի բարձր գնով: Ի՞նչն է խանգարում, որ այդ նոյն նախարարութիւնները, որոնք

մեծամասշտաբ գնորդներ են, միանգամից բորսայից ձեռք բերեն այն»:

Արտակ Մանուկեանը նաեւ պետական գնումներին յաճախակի առնչուող մի քանի ընկերութիւններ է մատնանշում: Նրա խօսքով, մասնաւորապէս, բենզինի դէպքում «չուկան յստակ բաժանուած է»:

«Շուրջ 85 տոկոսը «Ֆլեշ» ՍՊԸ-ն է ձեռք բերում, հնդկաձաւարի մի զգալի մասն էլ՝ «Մանանա Գրէյ»-ը: Աւելի զաւեշտալի դէպք նշեմ՝ օրինակ, «Ալեքս Գրիդ»-ը հանդիսանում է շաքարաւազի ներմուծողը, բայց շաքարաւազը գրեթէ միշտ ձեռք է բերում «Դանանա» ՍՊԸ-ից, որը այդ ընկերութեան ներկայացուցչու թիւնն է: Այսինքն՝ էլի միջնորդաւորուած գնումների հետ գործ ունենք», - ասում է Արտակ Մանուկեանը:

Մէկ այլ օրինակ՝ «Մենք ունենք Աւանի աղի կոմբինատ, մինչդեռ պետութիւնը երբեք այնտեղից աղ չի գնում, աղը ձեռք է բերում մի միջնորդ ընկերութիւնից, որն աղը գնում է այդ նոյն Աւանի աղի կոմբինատից եւ պետութեանը վերավաճառում է աւելի բարձր գնով: Ի՞նչն է խանգարում, որ անմիջապէս իրենից [աղի կոմբինատից] ձեռք բերեն», - հարց է հնչեցնում հակակոռուպցիոն կենտրոնի փորձագէտը:

«Կապերը Ռոբերտ Քոչարեանի Հետ Եղել Են Եւ Մնում Են». Վարդան Օսկանեան

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը կապ չունի «Համախմբում» կուսակցութեան հետ: Այս մասին Գլխավորում կուսակցութեան տարածքային գրասենեակի բացումից յետոյ լրագրողներին ասաց կուսակցութեան հիմնադիր Վարդան Օսկանեանը:

«Ոչ կուսակցութեան ստեղծման, ոչ ընթացքի հետ առնչութիւն չունի: Մարդ կա, որ ասում է՝ լաւ է, որ կապ չունի, մարդ կա, ասում է՝ դժբախտաբար չունի, լաւ կը լինէր, որ ունենար: Պարզապէս կապերը Քոչարեանի հետ եղել են եւ մնում են, 10 տարի մենք միասին աշխատել ենք եւ կարծում եմ, որ լաւ ենք աշխատել», - ասաց Վարդան Օսկանեանը՝ նշելով, որ երբեք պարտաւորուածութիւն չի գտնում իրեն Քոչարեանից տարանջատելու:

Յունուարի Դրութեամբ՝ Հայաստանի Բնակչուծիւնը Կազմել 2.998.000

2016 թ. Յունուարի 1-ի դրութեամբ Հայաստանի բնակչութիւնը կազմել է 2 մլն 998 հազար, որը 2015-ի Յունուարի 1-ի դրութեամբ նուազել է 14 հազարով: Այս մասին Յուլիսի 11-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարել է ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի ներկայացուցիչ Աննա Յովհաննիսեանը՝ ներկայացնելով «Օժանդակութիւն բնակչութեան հարցերով քաղաքականութիւնների իրականացմանը» ծրագրի շրջանակում 2016 թվականին կատարուած «Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան իրավիճակային վերլուծութիւն» հետազոտութիւնը:

Նրա խօսքով, այս նուագումը կապուած է բնակչութեան բնական աճի բացասական միտումներով. այսինքն՝ համադրուել են ծնունդների եւ մահերի թիւերը:

«Ազգային վիճակագրական ծառայութեան եռամսեակային ցուցանիշներով, այս տարուայ Ապրիլի 1-ի դրութեամբ եւս 4000-ով նուագել է բնակչութեան թիւը՝ 2016-ի Ապրիլի 1-ին այն կազմել է 2 միլիոն 994 հազար մարդ: Յովհաննիսեանն ասաց, որ եթէ առաջիկայ եռամսեակներն էլ

հաշուարկենք, ապա կանխատեսուած է, որ տարեկերջին մեր երկրի բնակչութիւնը տարուայ կտրուածքով 16 հազարով կը նուագի:

Իսկ ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեանն էլ նշել է, որ ամենալաւատեսական կանխատեսումներով, 2050 թվականին ՀՀ բնակչութիւնը կարող է լինել 3 մլն 100 հազար մարդ, իսկ ամենաբացասական ցուցանիշներով՝ 1 միլիոն 700 հազար:

Նրա խօսքով՝ երկրի բնակչութեան թիւի նուագումը լուրջ մտահոգութիւն է. օրինակ տնտեսապէս գրաւիչ լինելու համար ամենաքիչը տուեալ երկրում պէտք է 5 միլիոն սպառող լինի, որպէսզի երկիրը հրապուրիչ լինի օտարերկրեայ ներդրումների համար:

«Եթէ նախկինում ասում էին, որ պէտք է առնուազն 2,1 մլն բնակչութիւն լինի, որ հնարաւոր լինի պահպանել կայուն բնակչութիւն, հիմա կան որոշակի միջազգային աշխատութիւններ, որոնք ասում են՝ քանի որ ունենում ենք տեխնոլոգիաների աճ, աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացում, 1,9 մլր բաւարար է», - ասաց Հայրապետեանը:

Օլիգարխները Վերջնագիր Են Ներկայացրել ՀՀ-ին

«Իրատես» թերթը գրում է. «ՀՀ-ում սկսուել է 2017-ի խորհրդարանական ընտրութիւնների ցուցակի յատկեցման փուլը: Մեր տեղեկութիւններով, առայժմ ակտիւ քննարկումներ են ընթանում, այսպէս կոչուած, ռեյտինգային քուէարկութեամբ ընտրուող պատգամաւորների մասնակցութեան «ձեւաչափի» առնչութեամբ, որպէսզի «եւ՝ գայլերը կուշտ լինեն, եւ՝ ոչխարները՝ անվնաս»:

Ընդ որում, ռեյտինգային ցուցակում էական փոփոխութիւններ կը լինեն՝ օլիգարխներին եւ թաղային հեղինակութիւններին կը փոխարինեն նրանց հարազատներն ու մերձաւորները, օրինակ, Մհեր Սեդրակեանին կը փոխարինի նրա որդին: Մեր աղբիւրի տեղեկացմամբ, այս հրահանգն «Իջեցուել» է անմիջապէս Բաղրամեան 26-ից:

Սա, իհարկէ, չի նշանակում, թէ օլիգարխներ ընդհանրապէս չեն լինի, ոմանք, ինչպէս պարզուած

է, շատ ամուր են «նստած» խորհրդարանում, կարելի է ասել, անփոխարինելի են իշխանութեան համար: Ապագայ խորհրդարանը գերծ չի լինի նաեւ քրէստիոգարիկ տարրերից, որոնք այսպիսի վերջնագիր-դժգոհութիւն են դարձեալ ներկայացրել ՀՀ-ին: «Ինչու պէտք է ընտրութիւններին այդքան փող ու ջանք թափենք ձեզ համար, եթէ մեզ Աժ չէք բերելու»:

Լիովին այլ դիրքորոշում կայ համամասնական ցուցակի պարագայում: Այստեղ պէտք է լինեն ջանք, ցանկալի է՝ դրսում կրթուած, միջին տարիքի անհատներ: Այլ խօսքով, հանրութեան շրջանում այդ ցուցակը պէտք է ինտելեկտուալների համախմբի տպաւորութիւն թողնի: Նոր կերպարների կողքին դարձեալ կը լինեն հնաբնակներ ու ՀՀ-ից անբաժան կադրեր. հո ողջ բեռը չէ՞ն դնի երիտասարդների ուսերին, որ կուսակցութեան անունը «տանեն-կորցնեն»:

Որդի Խաչատուրովի Արկածները

«Հայկական Ժամանակ» օրաթերթը, գրում է, որ Սերժ Սարգսեանը ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Եուրի խաչատուրովի որդուն՝ Գրիգորի խաչատուրովին նշանակեց Պաշտպանութեան նախարարութեան երրորդ բանակային կորպուսի հրամանատար՝ կնքելով պայմանագիր հինգ տարի ժամկէտով:

Ընդ որում, նրան այդ պաշտօնին նշանակելու համար այնտեղից ազատեց գնեռալ-մայր Օնիկ Գասպարեանին՝ նշանակելով արդէն խաչատուրովի տեղակալ:

Որդի խաչատուրովի նշանակումը բաւական բացասական արձագանք ունեցաւ հասարակական շրջանակներում այն առումով, որ այդ երիտասարդ զինուորականը մինչ այժմ յայտնի է եղել որպէս խիստ բացասական համարում ունեցող սպայ թէ՛ պաշտպանութեան համակարգում, թէ՛ հասարակական-քաղաքական շրջանակներում: Նա յայտնի է որպէս անվերահսկելի զինուորական, քանի որ վայելել է հօր՝ ՊՆ-ում երկրորդ մարդու լիակատար ու բազմակողմանի հովանաւորութիւնը:

Յիշեցնենք, որ Գրիգորի խաչատուրովի անունը շօշափուել է մի շարք աղմկոտ պատմութիւնների ու յանցագործութիւնների հետ:

# ԼՈՒՐԵՐ

## Սերժ Սարգսեան. «Ամենակարեւորն Այն է, Որ Ղարաբաղը Դուրս Լինի Ատրպէյճանի Կազմից»

Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնն անվտանգ կարող է ապրել բացառապէս Ատրպէյճանի կազմից դուրս: Այս մասին «Ալ-Մայդին» հեռուստատարիքին տուած հարցազրոյցում յայտարարել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը՝ ընդգծելով, որ որպէս Ղարաբաղի ժողովրդի անվտանգութեան երաշխաւոր՝ Հայաստանի համար սա եղել եւ մնում է ամենակարեւոր հարցերից մէկը:

«Իսկ այդ անվտանգութիւնը կարող է ապահովուել միայն ու միայն Ատրպէյճանի կազմից դուրս: Որեւէ մէկի համար հիմա կասկած չկայ. եթէ ինչ-որ մի չար կատակով գոնէ մէկ օր Ղարաբաղը յայտնուի Ատրպէյճանի կազմում, Ղարաբաղում մի հայ չի մնայ: Այնպէս որ, ամենակարեւորը նա է, որ Լեռնային Ղարաբաղը դուրս լինի Ատրպէյճանի կազմից՝ սա է կարեւորը», - ընդգծել է Հայաստանի նախագահը:

Թէեւ տարածաշրջանը աշխարհագրական առումով ընդ-արձակ չէ, այդուհանդերձ, այս-տեղ խաչում են տարբեր շահեր, ինչը չի կարող չազդել հակա-մարտութիւնների վրայ, ասել Սերժ Սարգսեանը, միեւնոյն ժամանակ շեշտելով՝ եթէ անգամ ամբողջ աշխարհը փորձի համոզել, Ղարաբաղի ժողովուրդը երբեւէ չի համաձայնի ապրել Ատրպէյճանի կազմում:

## Բագրատեան.

### «Յայաստանը Գնում է Դէպի Սնանկացում»

«4-5 տարուց Հայաստանը կը յայտնուի Յունաստանի կարգավիճակում՝ սնանկացման եզրին, չի կարողանալ մարել իր պետական պարտքը, որովհետեւ նախորդ տարիներին երկրի պարտքը աճել է անգամներով, մինչդեռ տնտեսութիւնը դոփում է տեղում», - «Ազատութեան» հետ զրոյցում մտահոգութիւն յայտնեց Ազգային ժողովի պատգամաւոր Հրանդ Բագրատեանը:

Բագրատեանը, ով 1990-ական թուականներին երկու անգամ զբաղեցրել է վարչապետի պաշտօնը, ընդգծեց՝ իշխան-ութիւնները տնտեսութեան ռազմավարական զարգացման որեւէ ծրագիր չունեն:

Փաստարկելով, թէ ինչու երկիրը չի կարողանալ մարել արտաքին պարտքը՝ Բագրատեանն ասաց. - «Որովհետեւ պարտքի սպասարկումը արդէն 2020-25 թուին համնում է մի միլիարդ, յետոյ մէկուկէս միլիարդ դոլար տարեկան, այսօրուայ 500 միլիոն դոլարից: Եւ տնտեսութիւնը չի հասցնի, որովհետեւ երկրի պարտքը մօտաւորապէս վերջին 8 տարում մէկուկէս միլիարդից դառել ա 5 միլիարդ, 3.5-ով աւելացել ա, բայց ՀՆԱ-ն, որից պիտի վճարուի այդ պարտքը, մնացել ա նոյն 11 միլիարդի վրայ»:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան եւ Ֆինանսների նախարարութեան տուեալներով, եթէ 2008 թուականին՝ տնտեսական ճգնաժամից առաջ, երկրի համախառն ներքին արդիւնքը կազմում էր 11.9 միլիարդ դոլար, իսկ պետական պարտքը՝ 1.9 միլիարդ

«Պօքս իհարկէ ուժի մասին չէ, որովհետեւ ցանկացած գերտէրութիւն, նոյնիսկ ցանկացած միջազգային կառույց կարող է ուժով այս ինդիւրը լուծել, ասելս հետեւեալն է՝ կարելի է զարաբաղցիներին ոչնչացնել, կարելի է ցանկացած բռնութիւն կիրառել, բայց համոզել ապրել Ատրպէյճանի կազմում՝ դա անհնար է», - շեշտել է Հայաստանի նախագահը:

Շարունակելով հակամարտութեան թեման, նա յայտարարել է, որ կարգավիճակի հարցում վերջնական որոշում կայացնողը լինելու է Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը՝ ելնելով ազգերի ինքնորոշման ու ազատ կամ-արտայայտութեան իրաւունքի սկզբունքից, ու Ատրպէյճանը պարտաւոր կը լինի յարգել այդ որոշումը. - «Անշուշտ, առաջին հերթին կամքը Լեռնային Ղարաբաղում ապրողներին է, թէ նրանք ինչպիսի կարգավիճակում կ'ուզենան ապրել՝ լինեն անկախ պետութիւն, թէ՞ միացած լինեն Հայաստանի Հանրապետութեանը: Ինձ համար ամենից կարեւորը նա է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան անվտանգութիւնն ապահովուած լինի, որպէսզի նրանք կարողանան ապրել իրենց պատմական հայրենիքում այնքան, ինչքան այս աշխարհը գոյութիւն կ'ունենայ»:

էր, ապա 2015-ին ՀՆԱ-ն աւելի քիչ էր՝ 10.5 միլիարդ դոլար, մինչդեռ պետական պարտքը աւելացել էր 2.6 անգամ եւ անցել 5 միլիարդ դոլարի սահմանագիծը:

Ըստ ֆինանսների նախարարութեան, այս տարուայ առաջին վեց ամիսներին Հայաստանի պետական պարտքը աւելացել է 266 միլիոն դոլարով եւ Յունիսի 30-ի դրութեամբ կազմում էր 5 միլիարդ 343 միլիոն դոլար:

Հայաստանի այսօրուայ իշխանութիւնների նպատակը, ըստ նախկին վարչապետի, այն է, որ «մեզ գոլ չխփեն, մեր գոլ խփելու մասին խօսք չկայ»:

Նա համաձայնեց դիտարկ-մանը, որ այդպէս երկիրը չի զարգանում, շարունակում է արտագաղթը. - «Ոչ թէ շարունակուած ա, այլ արտագաղթի տեմպերը նոյնիսկ աճում են: Մենք, մտնելով Եւրասիական տնտեսական միութիւն 2015-ին, ունեցանք աննախադէպ արտա-գաղթի դէպքերից մէկը վերջին 25-30 տարում»:

Հարցին, թէ ինչու իշխան-ութիւնները չեն կարողանում տնտեսական աճի խոշոր ռազմա-վարական ծրագրեր մշակել եւ իրականացնել, Բագրատեանն արձագանքեց. - «Իրանք պիտի դուրս գան... Հետագայ խոշոր տնտեսական աճը ոչ միայն ինչ-որ ոլորտների մէջ աճ պիտի լինի. բիզնես էլիտաների փոփոխութիւն պիտի լինի: Իրանք կապուած են այդ բիզնես էլիտաների հետ: Եւ բիզնես էլիտաների, եւ՝ քաղաքական, սոցիալական էլիտաների փոփոխութիւն պիտի լինի»:

## Ներկայացուել են Կոնկրետ Առաջարկներ, Բայց Բաքուն Ձեւացնում է, Թէ Չգիտի Ինչի Մասին է Խօսքը. Նալբանդեան

ՆԱՏՕ-ի գազաթափողովից շրջանակներում ՀՀ նախագահի հանդիպումներում ԼՂ խնդրի շուրջ քննարկումները վերաբերել են այն պայմանաւորութիւնների, որոնք ձեռք են բերուել Վիեննայում եւ վերահաստատուել Սանկտ-Պետերբուրգում: Այս մասին, Վարչաւարում լրագրողների հետ ճեպագրոյցում նշել է Հայաստանի ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը:

«Այդ պայմանաւորութեան-ութիւնները եթէ իրականացուեն, համապատասխան պայմաններ կը ստեղծուեն, ինչպէս որ մենք բազմիցս ասել ենք, խաղաղ գործընթացն առաջ մղելու համար: Եւ գլխաւոր թեման հենց սա էր: Պօքսը, գիտէք, հետաքննութեան մեխանիզմի ստեղծման մասին է:

ՆԱՏՕ-ն ընդհանրապէս չի զբաղում ԼՂ խնդրի կարգաւորմամբ, եւ այն ընդհանրական ձեւակերպումները, որոնք վերաբերում են հիմնախնդիրների կարգաւորմանը, որոնք տեղ են գտնում ՆԱՏՕ-ի գազաթափողովների յայտարարութիւններում, հռչակագրերում, Ատրպէյ-ճանը նորից փորձեր է կատարում ձեւացնել, թէ դա աջակցութիւն է իր մօտեցումներին, բայց իհարկէ այդպէս չէ, ճեպագրոյցում նշել է Հայաստանի ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը:

Նրա խօսքով, Բաքուն փորձում է դրանով հիմնաւորել իր ռազմատենչ յայտարարութիւնները, գործողութիւնները, որոնք հակադրում են միջազգային հանրութեան մօտեցմանը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորման վերաբերեալ:

«Գիտէք, որ Միացեալ Նահանգները, Ֆրանսիան՝ երկու



ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեան

եռանախագահող երկրները Հիւսիս-ատլանտեան դաշինքի մաս են կազմում, եւ, Ռուսաստանի հետ համատեղ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորմանը վերաբերող հինգ յայտարարութիւններում, յստակ արտայայտուել են այն սկզբունքների, այն տարրերի վերաբերեալ, որոնք հիմք պէտք է հանդիսանան հիմնախնդրի կարգաւորման համար:

Հենց այս յայտարարութիւններն է փորձում անտեսել Ատրպէյճանը եւ ամեն կերպ խոչընդոտում է որեւէ յղում կատարելու անգամ այս յայտարարութիւններին, որոնք բոլոր այն առաջարկների եւ հին եւ նոր գաղափարների հիմք են հանդիսանում՝ որոշ ինչ-որ ձեւակերպումների նիւանսների փոփոխութիւններով՝ Բայց այդ առաջարկների հուշիւնը նոյնն է՝ Դրանք հիմնուած են հենց այն հինգ յայտարարութիւնների վրայ, որոնք արել էին եռանախագահող երկրները: Իսկ Հայաստանը բազմիցս ասել է, որ պատրաստ է համա-նախագահ երկրների հետ շարունակել ջանքերը՝ ուղղուած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորմանը», - ընդգծել է Նալբանդեանը:

## Ձաւախքում Սպաննուել են Յայկական Ընտանիքի 4 Անդամները



Վաչիանի գիւղի սպաննուած հայ ընտանիքի բնակարանը

Վրաստանի Ախալքալաքի շրջանի Վաչիանի գիւղում հայկական ընտանիքի չորս անդամների սպանութիւն էմ:

Ըստ հաղորդման, Վաչիանիում յայտնաբերել են 37-ամեայ կնոջ եւ նրա երեք՝ 5, 16 եւ 18 տարեկան անչափահաս երեխաների մարմինները: Նոյն աղբիւրի հաղորդմամբ, ընտանիքի գլխաւորը մեկնել է արտագնայ աշխատանքի Ռուսաստան:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ, վրացական «Իմեդի» հեռուստաընկերութիւնն էլ փոխանցում է ընտանիքի մերձաւորներին տեղեկութիւնները, ըստ որոնց, մինչ սպանելը ընտանիքի անդամներին տանջել են,

ենթարկել կտտանքների: Ուշագրաւ է, որ տան թանկարժէք իրերը չեն գողացել:

Նախնական տեղեկատուութիւնների համաձայն, դէպքը տեղի է ունեցել երկու օր առաջ: Բարեկամները միայն Յուլիսի 11-ին են յայտնաբերել սպանուած ծների մարմինները: Ենթադրուած է, որ մօրն ու աղջիկներին մահացու վնասուածքները հասցուել են բուժ գործիքով, իսկ ամենափոքրին՝ 5-ամեայ տղային խեղդել են: Ամբողջ գիշեր տեղում աշխատել են կրիմինալիստները: Վրաստանի ներքին գործերի նախարարութիւնը դեռեւս չի մեկնաբանել կատարուածը:

# ՄԵԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽԱՍԵՄԻՆ

ԷՏՈՒՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Վերջին տասը-տասնհինգ տարիներու աշխարհաքաղաքական սրընթաց զարգացումները մեզ արդէն շատոնց հաշտեցուցած էին այն միտքին հետ, որ անվերադարձ անցած-գացած են համեմատական խաղաղութեան, ուրեմն նաեւ որոշակի կայունութեան ա՛յն երանելի ժամանակները, երբ հզոր եւ այդ հզորութեան ձգտող քաղաքական մեծ ու պզտիկ ուժերը ամբարն ամիսները կը տրամադրէին հանգիստի, վերլուծումներու եւ ուժերը վերադասաւորելու նպատակով:

Հիմա այդ բոլորին համար ժամանակ չկայ. ամէն բան կ'ընթանայ գուգահեռաբար եւ անընդմէջ, բայց, այս բոլորը նկատի առնելով իսկ՝ պէտք է նշել, որ ընթացիկ ամառը բացառիկ է քաղաքական կարեւորագոյն իրադարձութիւններու յագեցուածութեամբ: Դեռ երկար պիտի շարունակուին յիշեալ անցուղարձեքները շուրջ ընթացող քննարկումներն ու բանավէճերը, տեղեկատուական դաշտի կողմէ երբեմն հմտորէն, յաճախ նաեւ ապաշնորհ ձեւով մատուցուող «վերջին ատենի ճշմարտութիւնները»:

Առանձնացնենք, սակայն, անոնցմէ երեքը, որոնք անմիջականօրէն կը կապուին քաղաքական այն ամբողջականութեան, որուն մաս կը կազմէ նաեւ Հայաստանը: Եւ այսպէս, Հռոմի Սրբազան Քահանայապետը կ'այցելէ Հայաստան, նախապէս նշելով, թէ քրիստոնէական առաջին երկիր այցը՝ «հաւատքի աղբիւրէն ըմպելու» համար է: Մեծ Բրիտանիան, համաժողովրդական հանրաքուէէն ետք կը յայտարարէ, թէ դուրս կ'ելլէ Եւրամիութեան կազմէն, իսկ ամիսներ առաջ սպառնալիքներ տեղացող եւ աջ ու ձախ իր արիւնոտ ցուցամատը շարժող Թուրքիոյ նախագահ էրտողան... Ռուսաստանէն եւ Իսրայէլէն ներողութիւն կը խնդրէ գործած այն մեղքերուն համար, որոնց գոյութիւնն իսկ ամիսներ առաջ կ'ուրանար ծանօթ կենդանիի յամառութեամբ:

Երեք օր Հայաստանէն հաղորդուող լուրերը գրաւեցին համաշխարհային լրատուութեան առաջին էջերը: Պատճառը, անշուշտ, յայտնի է բոլորին՝ Հռոմի Ֆրանցիսկոս Պապին այցն էր, սակայն... արդեօք միայն այդ...

2001-ին ալ Հռոմի Յովհաննէս-Պողոս Պապը այցելեց Հայաստան, ու թէեւ, պատճառը աւելի քան միաւորող էր՝ (Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունելու 1700 ամեակ) համաշխարհային տեղեկատուութեան արձագանքները շատ աւելի գուսպ էին...

Այժմ այդպէս չէ, եւ այդ, անշուշտ, ունի իր բազմաշերտ եւ արագ ակնարկով դժուար տեսանելի պատճառները, որոնք միտումնաւոր կը շրջանցուէին համաշխարհային տարբեր կեդրոններու սպասարկու լրատուամիջոցներու կողմէ: Այն, որ այդպէս պիտի վարուէին՝ ո՛չ գաղտնիք էր, ո՛չ ալ անակնկալ:

Շատ-շատերու սրտին պիտի չխօսէր, որ Սրբազան Քահանայապետը, կարգ մը նոյնադաւան գերտէրութիւնները մէկդի ձգած «Հաւատքի աղբիւրէն ըմպելու»

համար Հայաստան եկաւ...

Տխուր եւ անհասկնալի է, բայց մեր մէջ ալ, այցի պատճառներուն մասին հրապարակումներու մէջ, մէկ-երկու ճշմարիտ ու խորունկ վերլուծումէ գատ՝ գլխաւորաբար տեղ գրաւեցին մակերեսային եւ ոչինչ ըսող նիւթերը: Այս պարագային «ոչինչ ըսող» ձեւակերպումը բաւական մեղմ ըսուած է, որովհետեւ մէկ կողմէն պատանեկան խանդավառ հրճուանքն էր՝ թէ տեսքտեսք, Հռոմի Պապը մեզ պատուած է իր այցով, միւս կողմէ ալ անդադար փորձ կը կատարուէր այցը կապել հայրենի իշխանութիւններուն արագ անող «միջազգային հեղինակութեան» հետ՝ առանց հասկնալու, թէ այդ ատիկա որքան կը սահմանափակէ, կը պզտիկցնէ Քահանայապետի այցին քաղաքական ու պատմական նշանակութիւնը:

Կար նաեւ երրորդ քաղաքական բացայայտ տհասներու կամ իրենց ըրածը լաւ ըմբռնած «գրչակներու» խումբ մը, որ կը պնդէր, թէ աւելորդ է ուրախանալ եւ թէ Պապին այցը կրնայ գրգռել մեր դրացիներէն շատերը եւ աւելի բորբոքել տարածաշրջանային չմարող կրակը:

Ուրախանալու անշուշտ կարիք չկայ եւ առհասարակ քաղաքականութեան մէջ զգացականութիւնը ամէնէն զօրեղ հաշիշէն աւելի զօրեղ է, իրողութիւն մը, որուն իսկութեան մէջ մեր ժողովուրդը, ցաւ ի սիրտ, բազմիցս համոզուած է...

Աւելի գայրացնողը քաղաքական տհասներուն վերը նշուած երկրորդ փաստարկն է, թէ այդ այցը կրնար մեր դրացիներէն ոմանք գրգռել: Ո՛չ միայն պատմութեան անտեղեկ ըլլալը, այլեւ մղոններով տարրական տրամաբանութենէ հեռու այս միտքերը պատիւ չեն բերեր նոյնիսկ անմշակոյթ ու անգէտ խառնամբոխին, ուր մնաց ներկայացուցիչին այն երկրի, ուր Սրբազան Քահանայապետը կու գայ «հաւատքի աղբիւրէն ըմպելու» համար:

Ասոնց տրամաբանութենէն ելլելով, կարելի է կարծել, որ եթէ Պարիսը գեղեցկուհի Հեղինէին չառեւանգէր՝ ժամանակի հզօր Յունաստանը պիտի հանդուրժէր եւ բարեկամական ջերմ յարաբերութիւններ պիտի հաստատէր իր քիթին տակ բարգաւաճող ու ծաղկող, սակայն հպարտ ու անհնազանդ Թրոյային գոյութիւնը:

Առանց երկար-բարակ մտածելու կարելի է հարիւրաւոր օրինակներ բերել համաշխարհային պատմութեանէն եւ անգամ մը եւս՝ ուշ հասկացողներուն համար հաստատել այն միտքը, թէ քաղաքական ծրարները իրականացնելու ճամբուն վրայ պատրուակներ գտնելը ամէնէն դիւրին գործն է:

Օրինակ մը՝ բացարձակ իշխանութեան հասնելու ճամբուն վրայ, Հիթլեր հրամայեց այրել Ռէյխսպալի (Ազգային ժողով) շէնքը, այնուհետեւ ատոր մէջ մեղադրելով իրեն դիմադրող վերջին ուժը հանդիսացող համայնավարները եւ իւրայիններու ու ժողովուրդի հընդմեծամասնութեան ցնծազին կոչերու ներքոյ մահապատիժի ենթարկեց համայնավարներու առաջնորդ Թեյ մանն ու անոր գաղափարակիցները...

Փանք, սակայն, մեր պատ-

մութեան, բայց քանի որ յիշատակեցինք Յունաստանն ու Թրոյան՝ շարունակել առաջ, անգամ մը եւս յիշենք Թրոյան յայտնաբերող Շլիմանի խօսքերը, առաուել եւս, որ Ֆրանցիսկոս Պապին այցն ու անոր ելոյթը, կարծես Շլիմանի դատողութիւնն էր ու ներուշարունակութիւնը ըլլային:

«Եւրոպայի ողբերգութիւնը այն է, որ իր քաղաքակրթութեան հիմքին մէջ դրաւ ոչ թէ Հայկական, այլ Հին Յունական մշակոյթը»:

Այսօր ԺԹ. դարու առաջին կիսուն կատարուած այս յայտարարութեան ճշմարտացիութեան կը բախի քաղաքական խարդաւանքներու մէջ խճճուած, ամբողջատիրութեան մոլուցքով տառապող եւ իր կամքը բոլորին պարտադրել փորձող քաղաքական Եւրոպան:

Այս մասին է, որ կը զգուշացնէր իր ուղ ու ծուծով եւրոպացի Շլիման, կը զգուշացնէր շուրջ երկու դար առաջ, երբ երեւակայել անգամ կարելի չէր, որ օր մը նոյն այդ աւանդապաշտ ու կրօնասէր Եւրոպան կրնայ համասեռ ամուսնութիւններու վերաբերեալ օրէնքներ ընդունել կամ յանուն ոսկրի գայթակղեցնող փայլին՝ տափաստանաբնակ բարբարոսին սկուտեղի վրայ հրամցնել իր հաւատակիցները, անոնց շարքին նաեւ ա՛յն ժողովուրդը, որուն քով այսօր կու գայ Հռոմի Սրբազան Պապը՝ «Հաւատքի աղբիւրէն ըմպելու» համար:

«Բոլոր հայերուն համախմբումը եւ որոշ դրացի երկիրներու հետ լարուածութիւնը յաղթահարելուն ուղղուած օգտակար ծամբաներ գտնելու յարաճուն պարտաւորութիւնը շատ աւելի կը դիւրացնեն իրականացնելու այս կարեւոր նպատակները՝ սկզբնաւորելով Հայաստանի համար ճշմարիտ վերածնունդի դարը: Այս տարի պիտի ամբողջանայ Հայաստանի անկախութեան 25-րդ տարեդարձը: Երջանիկ պահ է ուրախանալու եւ առիթ՝ յիշելու նուաճուած ձեռքբերումները եւ առաջադրելու նորանոր նպատակներ: Այս ուրախ յոբելեանի տօնակատարութիւնները աւելի իմաստալից կ'ըլլան, եթէ բոլոր հայերուն համար թէ՛ Հայրենիքի, եւ թէ՛ Սփիւռքի մէջ, ասիկա ուժերը համախմբելու եւ համա-կարգելու իւրօրինակ պահ դառնայ՝ ապահովելու համար երկրին քաղաքացիական ու հասարակական հաւասարակշիռ ու համապարփակ զարգացումը:

Խօսքը անդադար գգօն ըլլալու մասին է, որպէսզի բնաւ չթերանանք բոլորին հաւասար բարոյական աջակցութիւն ցուցաբերելու,

## Սերժ Սարգսեանի Վարչաւիոյ Ելոյթ Ետք

Շարունակուած էջ 1-էն

Քրէականացնող նախագիծի ընդունումին համար: Նախագահները նաեւ քննարկեցին դարաբաղեան զարգացումները եւ բանակցութիւններու ընթացքը:

Հայաստանի Հանրապետութեան նախագահը վարաշարժով մէջ տեսակցեցաւ նաեւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղար ձոն Քէրիի հետ: Հանդիպումի ընթացքին քննարկեցաւ Արցախի հիմնախնդրի կարգաւորման վերաբերող հարցեր: Սարգսեան բարձր գնահատեց ամերիկեան շարունակական ջանքերը՝ տարածաշրջանին մէջ կայունութեան եւ խաղաղութեան ապահովման ուղղութեամբ: Սարգսեան եւ Քէրի

տկարներուն ու տարաբախտներուն զօրակից կանգնելու մէջ:

«Հայոց հաւատքը, ինքնութիւնը, արժեհամակարգը հեռու է պետութեան առողջ աշխարհիկութիւնը խոչընդոտելէ, աւելին, կը պահանջէ եւ կը սնուցէ գայն՝ խրախուսելով հասարակութեան բոլոր քաղաքացիներուն մասնակցութիւնը...»: Այսպէս խօսեցաւ Ֆրանցիսկոս Պապը Յունիս 24-ին, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի նստավայրին մէջ ունեցած իր ելոյթի ընթացքին:

Իր առաքելական այցը որպէս ուխտագնացութիւն որակեց Սրբազան Քահանայապետը. «Ես կ'երթամ առաջին քրիստոնէական երկիր, աղօթեցէք ինձի համար», - իր այցն առաջ եւ նոյն իսկ այցի ընթացքին, բազմիցս, կարծես ինքն իրեն այսպէս շշնջացեր է Ֆրանցիսկոս Պապը:

Չափազանց ուշագրաւ, դիպուկ եւ իմաստուն են մէկ ակնարկով պարզունակ թուացող եւ պարզապէս փափաք արտայայտող այս տողերը: Այդ նախադասութիւնը կրնար սովորական ըլլալ, եթէ հնչէր սովորական մահկանացուի մը բերնէն: Այդ տողերուն հեղինակը, սակայն, աշխարհաքաղաքական բուրգի գագաթին գտնուող գերհզօր ուժերէն մէկուն, աշխարհի տարածքին շուրջ մէկ միլիառ հետեւորդներ ունեցող Վատիկանի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի խօսքերն են...

Նկատենք՝ ան չի նեղցնէր սահմանները, եւ իր՝ «Ես կ'երթամ առաջին քրիստոնէական երկիր, աղօթեցէք ինձի համար», - խօսքերուն մէջ չի նշեր «քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն» տարածուած եզրոյթը: Աւելին, ան չի խօսիր նաեւ քրիստոնէութեան կաթոլիկ, բողոքական կամ լուսաւորչական ուղղուածութիւններուն մասին, այլ կը խօսի "առաջին քրիստոնէական երկրին" մասին, ուր, ըստ իրեն, կը գտնուի «հաւատքի աղբիւրը»...

Անգամ մը եւս յիշենք Շլիմանի խօսքերը եւ հաստատենք, որ աններելի միամտութիւ թոյլ տուած կ'ըլլաք, եթէ կարծենք, թէ ասիկա պատահականութեան արդիւնք է, ինչպէս որ քաղաքականապէս կոյր պէտք է ըլլալ, չտեսնելու համար Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետեւողական գործողութիւններուն անքակտելի շղթան Հայոց Յեղասպանութեան գոհերու յիշատակին նուիրուած Սուրբ Պատարագ, Գրիգոր Նարեկացի՝ Տիեզերական Վարդապետ, Յեղասպանութեան ճանաչում եւ դատապարտում, այց Հայաստան... եւ վերջին մասով:

Քննարկեցին Վիեննայի եւ Սէնթ Փեթրսպուրկի մէջ կայացած տեսակցութիւններուն արդիւնքները, շեշտելով ձեռք բերուած պայմանաւոր-ուածութիւնները գործադրելու կարեւորութիւնը:

Սարգսեան եւ Քէրի անդրադարձան Ռուսաստանի եւ Միացեալ Նահանգներու նախագահներու հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին դարաբաղեան հարցի քննարկումին:

Պետական քարտուղարը յայտարարեց, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն հետ հանդիպումներու ընթացքին քննարկած է բանակցութիւններու հոլովոյթը: Քէրի վերստին շեշտած է պարտաւորութիւնները կատարելու անհրաժեշտութեանը:

# ԱՆԳԱՐԱ ՅԱՅՏՆՈՒԿԸ Է ՔԿԿ-Ի ԵՒ ՏԱՐԵՇԻ ՍԱԳԻԼՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

## ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Մէկ կողմէ Անգարա պաշտօնապէս կը յայտարարէր իսրայէլի հետ յարաբերութեանց բնականոնացման մասին եւ միւս կողմէ թրքական մարդասիրական նաւեր կը հասնէին Պաղեստինեան կազմի ափ:

Թուրքիան, որ անցնող ամիսներուն ընթացքին կը յայտնուէր ամբողջական մեկուսացման վտանգին առջեւ այսօր կարեւոր շրջադարձ մը կատարելով կը փորձէ յարաբերութիւններու նոր ընթացակարգով մը շրջանային թատերաբեմ ներկայանալ:

Քաղաքական բրակմաթիւզմի եւ յարափոփոխ կեցուածներու վարպետ համարուող էրտողանի համար Թէլ Աւիլի հետ յարաբերութիւններու աշխուժացումը բնական պէտք էր: Պէտք է նաեւ դիտարկել, որ Անգարա-Մոսկուա անսպասելի ձիւնհալը անմիջական կապ ունէր իսրայէլի վարչապետ Բէնիամին Նաթանիահաւուլի վերջերս Մոսկուա կատարած այցին հետ: Նաթանիահաւու, որուն այցին մասին թափանցիկ վերլուծութիւններ չեղան, պարզ է, որ հանդէս եկաւ միջնորդի դերով եւ անոր թիւ մէկ նպատակն էր հաշտեցման եզրեր գտնել մէկուսացած Անգարայի եւ քէն պահած Մոսկուայի միջեւ:

Միջին Արեւելքի համար բաւական մեծ ազդեցութեան գոտիներ ունեցող այս երկու երկիրներու իրար հետ համերաշխ ըլլալու հանգամանքները աւելի կարեւոր են քան, ըսենք Ռուսական Սու-26 կործանիչի քայքայման դէպքը եւ անոր մէկ օդաչուին սպաննութիւնը շատ հաւանաբար թիւրքմէն գինեալներու կողմէ: Սուրիոյ ճակատագրական պատերզամին մէջ կարեւոր գործօն հանդիսացող երկու տէրութիւնները ունին հաւաքական շահեր ու առաջին անգամը չէ, որ ուսներու կողմէ էրտողանի դէմ հնչած ատելավառ խօսքերը պիտի աւարտէին նոր սիրաբանութեամբ: Սկիզբ առած յարաբերութիւններու բնականոնացումը պիտի ընթանայ դանդաղ քայլերով բայց եւ այնպէս երկու շաբթի օր Անգարայի կողմէ ռուսական կործանիչներուն առջեւ «ինճիրլիք»ի օդակայանը բաց յայտարարելու մասին որոշումը արդէն իսկ շատ բան կ'ըսէ այդ առումով:

Անհաւանական ալ չէ, որ թրքական ներքին ճակատին վրայ բաւական բարդ խնդիրներ ունեցող էրտողան «կակուղցընէ» Սուրիոյ

իշխանութեան մասին իր կեցուածքները եւ այս առումով Մոսկուայէն «կանաչ լոյս» մը ստանալէ ետք իր բոլոր կոշտ մօտեցումները մէկդի դնէ եւ ձեռք երկարէ Սուրիոյ նախագահին: Այսպիսի շրջադարձներու մէջ բաւական մեծ աւանդ ունեցող Թուրքիային համար դժուար չէ այդ քայլը ընելը պայմանաւ, որ ան կարողանայ իր ուզածը քաղել Սուրիոյ մէջ: Եթէ պահ մը ենթադրենք, որ Անգարայի հովանիով կուտող խմբաւորումներ վերջին ամիսներուն մեծ նահանջ մը ապրեցան Սուրիոյ մէջ ապա այսօր փաստացի տուեալ է, որ մահամերձէ կարծուած այդ խմբաւորումները մեծ քանակութեամբ «թթուածին» ստանալով կը հեռանան անխնայ թակարդէն: Տարբեր հաշիւներով «կը հեռացուի» Հալէպի ճակատամարտը, որուն կարեւորութեան մասին խօսեցան գրեթէ բոլորը: Այս պատկերին դիմաց կարելի է հասկնալ, որ շրջանին մէջ «կարկանդակ»ի բաժանում մը կը կատարուի: Ուզալիք նոր դրոյթներուն դիմաց շատ բնական է, որ Անգարա իր բոլոր ներուժը լարէ յստակ եւ ապահով դեր մը ունենալու համար:

Թուրքիոյ համար այսօր գերխնդիրը Սուրիոյ նախագահին իշխանութեան վրայ մնալ-չմնալու հարցը չէ, այլ անոր համար էական մտավարկութիւնը Սուրիոյ քիւրտներուն ապագան կամ իշխանատենչութեան փորձերն են: Ով ալ ըլլայ Անգարայի տէրը, անոր համար անընդունելի է, որ Սուրիոյ քիւրտները տարբեր շրջաններու մէջ ինքնավարութիւն յայտարարեն: Ուրեմն հոս է, որ Անգարա-Դամասկոս շահերը կը համընկնին պայմանաւ, որ այդ շահերու «օրհնութիւն»ը կատարուի Գրէմլի անմիջական հսկողութեան տակ:

Բացի ասկէ պէտք է նաեւ հաշուի առնել, թէ Անգարա ինչ պայմաններով կը մօտենայ Թէլ Աւիլին: Համարաբական եւ համախալամական լոգունքներով հանդէս եկած էրտողան այսօր իր շահերուն համար, իր իսկ գործածած լոգունքներուն դէմ պիտի ելլէ եւ մէկդի դնէ պաղեստինեան դատին հանդէպ իր ունեցած կեցուածքները: «Համաս», որ կազմի տէրն ու տիրականն է լաւապէս կը հասկնայ այս փուլին լրջութիւնը եւ կը շարժի պահի թելադրած «մեղմութեամբ»: Աւելին «Համաս»ի ղեկավարութիւնը չուզէր հակադրել Անգարայի անոր Պոլսոյ մէջ

հաստատուած զինուորական պատասխանատուներու հեռացումին դիմաց: Այս բոլորը կը կատարուին մեր աչքերուն առջեւ եւ միշտ հիմնուելով «Բէլալ փոլիթիք»ի կանոններուն վրայ:

Գալով Ուաշինկթընի, որուն հիմնական ներկայացուցիչը՝ նախկին վարչապետ Ահմատ Տաւութօղլուն «խաղէն կը հեռացուէր», ցարդ պաշտօնական արձագանք չէ տուած: Ամերիկեան կողմը, որ բաւական վրդոված է էրտողանի կեցուածքներէն ըստ երեւոյթին յառաջիկայ հանգրուանին ալ կը պահէ իր լուսթիւնը մինչեւ, որ Նոյեմբերին նախատեսուած նախագահական ընտրութիւնները աւարտին եւ ԱՄՆ նոր առաջնորդին վարչակարգը շրջանին համար գծէ ճանապարհային նորացուած քարտէզ մը: Ճիշդ է, որ Թուրքիան Ամերիկայի համար շրջանային կարեւոր դեր ունեցող տէրութիւն է, բայց այդ կարեւորութիւնը կամ դերը առաջուան պէս անփոխարինելի դեր մը չէ: Բնականաբար այս բոլորը աւելի կը յստականան միայն Սպիտակ Տան նոր ղեկավարի ընտրութիւնէն ետք ու այդ առումով եւս կարելի է պատկերացումներ նորութիւններու: Վերը խօսեցանք իսրայէլի ունեցած հաւանական դերի մը մասին: Այդ դերը ունի մէկ սլաք, որուն հիմնական թիրախը՝ Իրանն է: Թէլ Աւիլի համար կարեւոր է հաւաքագրել այն կողմերը, որ ունին միացեալ շահեր ու շատ հաւանական է, որ անոնց ունեցած շահերուն ընդհանուր պրիսմակը անդրանցնի իսլամական հանրապետութեան ընդհանուր շահերը:

Ատոր համար է նաեւ, որ Նաթանիահաւու կը շտապէ յաջողութեամբ պահել Անգարա-Մոսկուա հաշտեցումը: Այս պրիսմակէն

դիտուած նորութիւն մը փոխանցած չենք ըլլար, եթէ գրենք, որ Մոսկուա մէկ օրէն միւսը իր դաշնակիցներէն չի հրաժարարի: Այս խօսքը վաւերական կը դառնայ, եթէ լաւ կարգանք Սուրիոյ պատերազմի օրագրութեան ամէնէն թէժ էջերը: Բացի ասկէ Մոսկուա ինք ալ հետամուտ է, որ եւրոպական պատիժներուն դիմաց ունենայ թրքական տնտեսական համակարգին հետ համագործակցելու միջոցները: Տնտեսական մեծ շուկայ, նաւթ, ու մանաւանդ միջերկրականեան ջուրերուն մէջ եղող իսրայէլեան կազի հանքերու ներուժէն օգտուելու կարելիութիւններ:

Ահա այս օրինաչափութեամբ է, որ էրտողանի Թուրքիան մեծ շրջադարձներ կատարելու սեմին է: Ամէն պարագայի սակայն Օսմանեան յապիկով հանդէս եկող Թայպը առաջուան նման համընդհանուր առաջնորդ մը ըլլալու բոլոր միակորները սպառած է: Անոր գործած մեղքերն ու յանցանքները զինք նսեմացուցած են ու կարեւոր ալ չէ, թէ ան ինչքանով պիտի կարողանայ իր երկրի տնտեսական ձեռքը տանիլ դէպի ռուսական շուկաներ:

Կարեւոր է, որ արաբական աշխարհը այսօր աւելի քան, որեւէ ժամանակ կարողացաւ աւելի մօտէն ճանչնալ զինք:

Ու այդ ճանաչողութիւնը շատ հաւանաբար իր առաջին ատամները ցոյց տայ յառաջիկայ փուլերուն:

Անգարա պիտի շահի Մոսկուայի եւ Թէլ Աւիլի սիրտը, բայց ասոնց դիմաց ան պիտի դիմագրաւէ քրտական ՔԿԿ-ին եւ ըստիքալ Տահէշին արիւնոտ մագիլները:

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

**1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506**

**Bedros S. Maronian** 818/500-9585

**Siamanto B. Maronian** 818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**NEW YORK LIFE** **Anthem** **BlueShield** **Aetna** **Health Net** **CIGNA** **KAISER PERMANENTE**

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

# Հայաստանը ենթարկուեց շանտաժին եւ ընդունեց իրեն թելադրուած խաղի կանոնը

## ՍԻՐԱՆՈՒՅՑ ՊԱՊԵԱՆ Հարցազրուցավար

Մեր զրուցակիցն է քաղաքագիտութեան դոկտոր Հայկ Ա. Մարտիրոսեանը:

Պարոն Մարտիրոսեան, վարչաւայում ՆԱՏՕ-ի գազաքննաժողովում Սերժ Սարգսեանը իր ելոյթում նշել է, որ ստատուս քուն կը փոխուի, եթէ ճանաչուի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրացումը: Փաստացի Սերժ Սարգսեանը նշո՞ւմ է այն պայմանը, որի դէպքում տարածքների յանձնում տեղի կ'ունենայ:

Այո՛ Անշուշտ: Սա բաւական անկեղծ խոստովանութիւնն է:

Հայաստանը պնդում էր, որ քանի դեռ վերահսկման մեխանիզմները չեն տեղադրուել, տեղին չէ բանակցութիւններ սկսել: Մինչդեռ ՆԱՏՕ գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ափաթուրայը յայտարարել է, որ ստատուս քուն չի կարող այսպէս երկար շարունակուել, այն պէտք է փոխուի, եւ դա պէտք է արուի բանակցութիւնների միջոցով, եւ որ հիմա շատ գաղափարներ կան բանակցային սեղանին:

# «ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ» Հեղինակ ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ


Վերջերս Պէյրութի «Շիրակ» հրատարակչատունէն լոյս տեսաւ սփիւռքահայ ճանաչուած բանաստեղծ եւ գրականագէտ Պէյպօ Սիմոնեանի «Գրականութեան ճամբուն վրայ» կոթողային հատորը:

500 էջերէ բաղկացած այս գիրքին մէջ ամփոփուած են բանաստեղծի տասնեակ տարիներու գրչի արգասիքն եղող խոհերն, յոյզերն ու մտորումները:

Հատորի յառաջաբանին մէջ հայրենի ծանօթ գրականագէտ Երուանդ Տէր Խաչատուրեան, համապարբակ եւ ընդարձակ վերլուծութեամբ մը իր գնահատականը կու տայ տաղանդաւոր բանաստեղծ Պէյպօ Սիմոնեանի երկերուն մասին: Ան մասնաւորաբար կ'ընդգծէ «Այս ժողովածուն յստակ եւ ամբողջական պատկերացում է տալիս բանաստեղծի, գրականագէտ, մշակութաբան, հմուտ մանակավարժ, հանրային գործիչ Պէյպօ Սիմոնեանի վերջին տասնամեակների գրողական կեանքի եւ գործունէութեան հետաքրքրութիւնների շրջանակների, իր հոգեկան ապրումների, ստեղծագործական տուայտանքների, ուրախութիւնների եւ ինչու է նաեւ իր դառնութիւնների, հիասթափութիւնների, իր ցաւերի եւ մտահոգութիւնների մասին»:

Գիտական մօտեցումով պատրաստուած սոյն ժողովածուի բովանդակութիւնն ունի հետեւեալ ենթախորագիրները «Գրական Դիմանկարներ եւ դիմաստեղծներ», «Գրախօսութիւն եւ Գիրք», «Հայրենիք, լեզու եւ ազգութիւն», «Լիբանանահայ գրական-հասարակական կեանք եւ մշակոյթ», «Հոգեւոր Հարստութիւն եւ Մշակութային Մտահոգութիւններ», «Խոհեր եւ Մտորումներ» եւ «Յուշերու Բեկորներ»:

Մէկ խօսքով գեղեցիկ հասկաքաղ մըն է տաղանդաշատ բանաստեղծի «Գրականութեան ճամբուն վրայ» հատորը, որուն մէջ անթեղուած են եւ իրենց արտացոլացումը



գտած յետ-եղեռնեան եւ ժամանակակից կարգ մը հայ գրողներու երախայրիքն ու Պէյպօ Սիմոնեանի բանիմաց խոհերն ու ապրումները՝ գրական, նչպէս նաեւ մեր ազգային-հասարակական եւ ընկերային տուայտանքներու մասին:

Երանի թէ այս հատորին մէջ տեղ գտած ըլլային նաեւ Պէյպօ Սիմոնեանի ցարդ անտիպ մնացած կարգ մը շահեկան այլ գործերը: Կը յուսանք որ անոնք եւս լոյս աշխարհ կու գան այլ պատեհ առիթով:

Այս առթիւ մեր գնահատականը կ'երթայ գրականագէտ Երուանդ Տէր Խաչատուրեանին, որ հեղինակն է գիրքի յառաջաբանին, ինչպէս նաեւ բժախնդրօրէն կազմած ու խմբագրած է այս գեղատիպ հատորը:

Պէյպօ Սիմոնեանի «Գրականութեան ճամբուն վրայ» հատորի հրատարակութիւնն իրագործած են իր գաւազները Տիգրան եւ Ռազմիկ Գալաճեանները, իրենց հօր գրական, մտաւորական, կրթական եւ հասարակական վաստակին հանդէպ ունեցած խոր ակնածանքին եւ հիացումին համար:

Գ. Մ.

## ԶՈՒԹԱԿԱՐԱՐԸ

### Ո.ԿՈՐԻՒՆ

Նա միայնակ էր, ջուրկալը ձախ ձեռքին, ճամբան խարխափող երկար ձողը ալ ձեռքին, սեւ ակնոցը խաւար աչքերին, եկաւ եւ կանգ առաւ ճաշարանի առջեւը: Ինչպէ՞ս Նա սակացաւ, որ այստեղ ճաշարան է, դա պաշտառատեսների (չտեսնող) հօր չիշողութեան արդիւնքն է: Մայթի վրայ աթոռներից մէկին նստեց, մինչ այդ յաճախորդներից որեւէ մէկը իրեն ուշադրութիւն չէր դարձնում, բայց նուազելուն պէս հայեացքները ուղղուեցին նրա կողմը, լարերը տրտմալից մոտիկով էին հնչում, ով գիտէ ինչ ցաւերից մղելով թախիծ եղանակով էր հոգին աղաղակում, արդեօք խաւար աչքերի ցաւն էր պոռթկում, թէ՛ մութ կեանքն էր բողբոջում: Ո՞վ էր նա, ինչպէս էր յայտնուել այս վիճակին, ի ծնէ էր, թէ՛ պատահմունքի հետեւանք: Ի տես նրան ինձ մօտ տխուր չիշողութիւններ եւ խղճմտանքի գզգզմունքներ արթնացան, բայց ինձ նուազող գզգզի եւ նրան առաւել մեծարելի, քանի որ նա իր պոռթառատեսութեամբ ջուրկակ նուազել է իմանում, իսկ անձս ոչ: Նա լուռ ու մունջ վիզը ջուրկակին յենակ իր

աշխարհի դարդն էր լացում, ով գիտէ շատ-շատերի՝ պատերազմներից աղետեալների եւ խեղճ ու դժբախտ անկարների: Ահա այս սրտամորմոք հոգեվիճակում ճաշարանի տէրն էր, թէ պատասխանատու անձերից, մօտեցաւ նրան կոպտելով, թէ.

-Ո՞վ քեզ հրաւիրեց այստեղ, որ չես էլ դադարեցնում, յաճախորդները դժգոհում են, շուտ հաւաքիր ու հեռացիր՝:

Յաճախորդներից մէկը ոչ շատ հեռու ընդդիմախօսեց նրան ասելով.

-Դու մեծ սխալ թոյլ տուիր նրան անարգելով, նա չի՛ երթայ, կը մնայ:

Չուրկակահարի ձեռքը բռնելով տարաւ մօտը նստեցրեց:

Պատասխանատուն չհամարձակուեց վիճաբանութեան մտնել, պոչն հաւաքեց ու գնաց:

Այդ ազնիւ սրտամորմուռ մարդը ուտելիք ապապրեց նրա համար, նա ուտելուց յետոյ կանգնեց, որ գնայ գուգարան, յաճախորդ մարդը իր մօտ կանչեց մատուցողին ասելով.

-Ինչո՞րեմ, այս մարդուն առաջ-

# ԱՆՆՄԱՆ ՄԱՍԱՆ՝ ՄԱՐԻԱ ԵԱԳՈՊՍԸՆ (1882-1960)

ՁԵՆՈՐ ԱՄԳ ԲՅՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

«Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ չերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պահէ զնա»: (Յովհ. Ժբ. 24-27)

Աւետարանական պատգամը կը թելադրէ մեզի ըլլալ ցորենի հատիկ մը, որ պէտք ունի մեռնելու՝ արդիւնք տալու համար:

Մարիա Եագոպուրնիս բովանդակ կեանքը եղաւ ինքնամատուցման ու ծառայութեան՝ դէպի իր նմանը, դէպի խեղճը, անօգնականը, անգործը, դէպի անմեղ մանուկները Հայոց, որոնց ճակատագիրը մուսուլ էր ու անորոշ Հայ Յեղասպանութեան օրերուն:

Համիտեան անմարդկային ջարդերը (1894-1896) ցնցած էին աշխարհը: Սկանտինաւեան երկիրները սաստիկ մտահոգ էին հայոց ծանր վիճակով: Տանիմարքան լուրջ ու գործնական միջոցներու կը դիմէր որպէսզի հասնէր աշխարհ մը անդին տառապակոծ հայութեան:

Խղճի անհուն պարտքով ու երախտագիտութեամբ կը չիշենք Լիբանանի ճիւղէջլ քաղաքի «Թուչնոց Բոյն» որբանոցի դանիացի հիմնադիր, ազնուահոգի ու բարեգործուհի՝ Մարիա Եագոպուրնի անունը, որ յաւէտ դրոշմուած պիտի մնայ մեր սիրտերուն մէջ իբրեւ անձ մը, որ լքեց ինքզինք, ուրացաւ ու մեռցուց իր անձը որպէսզի ուրիշներ ապրին ու ծաղկին:

Հագուադէպ է, որ անձ մը ջանայ լիուրի գործադրել Աւետարանի շքեղ պատգամը եւ ինքնագոհաբերութեամբ կեանք պարգեւէ իր նմանին: Տանիմարքայի ապահով ու բարօր կեանքը լքելով, սակայն, Մարիա՝ կանուխ տարիքէն կը նուիրուի բարեգործական սուրբ աշխատանքի՝ օգնելու, փրկելու, կերակրելու, կրթելու եւ մեծցնելու հայ սերունդ մը որ խորհրդի, Մուշի, Վանի, Մարաշի եւ այլ հայաշատ բազմաթիւ ոստաններուն մէջ իր մահկանացուն կը կնքէր մեր դարաւոր ոստի անագորոյն հարուածին տակ: Մարիա իր հարազատ աչքերով կը տեսնէ ծովածաւալ կարիքները հայութեան եւ իր անձնական յուշերուն մէջ վաւերական տեղեկութիւններ կը հաղորդէ մարդկութեան՝ Հայոց Եղեռնի մասին: Ան իր վեց հարիւր էջանոց օրագրութեան մէջ մանրա-



մասնօրէն կը նկարագրէ հայոց ծանր, մահ ու կենաց օրերը: Իբրեւ օտարահայտակ, բարձր դիրքի ու վարկի տէր, Մարիա քանիցս կը դիմէ Օսմանեան կառավարութեան ի սպառ ազատելու ողջ սերունդ մը: Բայց ի գուր ք: Իր յուշագրութիւններուն մէջ ան կուտայ փշաքաղիչ լուրեր Հայ Սպանդի մասին եւ կը փրկէ կեանքը հազարաւոր որբերու, անտիրականներու, որոնք կը քալէին ոտապոբիկ, կը դեզերէին աննպատակօրէն արեւի կիզիչ ճառագայթներուն ներքոյ՝ ամբողջովին անպատասպար, անօթի, հիւժուած, կիթոտ, հիւանդ: Ան իր ջերմ սիրտը եւ լայն քսակը կը բանայ ամէնքին անխտիր եւ իր սիրոյ հնոցին մէջ կը տաքցնէ անոնց ցրտացած հոգիները, կը մխիթարէ, կը պաշտպանէ, տէր կը կանգնի իբրեւ հարազատ ծնողք: Անոր զգայուն ու փափուկ սիրտը թոյլ չի տար որ այդ անմեղ որբուկներէն մէկը կորսուի: Իբրեւ գիտակից, հոգատար ու նուիրեալ հիւանդապահուհի, Մարիան կը ստանձնէ ինամքը ծանր հիւանդութիւններով բռնուած երեխաներուն խորհրդի Ամերիկեան հիւանդանոցին մէջ եւ իր աննման ու անսահման սէրով կ'ամօքէ անոնց ցաւը, կը թեթեւցնէ անոնց տառապանքը ու ծանր խաչը:

Համաշխարհային պատերազմէն ետք, 1919 թուին, Մարիա կը վարակուի ժանտախտով (typhus) եւ կ'որոշէ վերադառնալ Տանիմարքա՝ բուժուելու նպատակով: Ճանապարհին, Ամերիկան կը հրաւիրէ զինք որ բանախօսութիւններ կատարէ ջարդերուն մասին: Հոս է որ ան Օսմանեան կառավարութեան սանձարձակ գործունէութեան կ'անդրադառնայ եւ խժղութիւնները ու անպատու բարբարոսու-

թիւնները կը նկարագրէ: Եթէ ամսուայ կեցութեան ընթացքին, ան Ամերիկացի ազնիւ ժողովուրդէն կը ստանայ նուիրատուութիւններ՝ շարունակելու իր աստուածահաճոյ ու նուիրական գործը: 1920-1921 թուականներուն, ան կը փորձէ վերադառնալ խորհրդ, սակայն թուրքական կառավարութիւնը կ'արգիլէ անոր մուտքը: Ան չի վհատիր, այլ անմիջապէս կ'անցնի Լիբանան ուր կը շարունակէ անել ու դաստիարակել հայ մագապուրծ երեխաները, որոնք թիւով կ'անցնէին հարիւր հազարը եւ կը տեղադրուէին զանազան երկիրներու մէջ, ինչպէս՝ Արեւելեան Հայաստան, Ռուսաստան, Սուրիա, Յունաստան եւ այլուր:

1928 թուականին, Մարիա կը հաստատուի Լիբանանի ճիւղէջլ քաղաքը եւ կը հիմնէ «Թուչնոց Բոյն» որբանոցը, ուր հարիւրաւոր որբուկներ կուզան ինամուելու, մեծնալու, եւ դառնալու օգտակար տարրեր համայն մարդկութեան:

«Թուչնոց Բոյն» որբանոցի որբերը Մարիային ճանչցան իբրեւ իրենց մայրը, եւ այդ պատճառով զինք կոչեցին ՄԱՄԱ: Այս մակդիրը ան կրեց արժանավայելօրէն տասնեակ տարիներ, վասնզի իրօք ան իր մայրական զեղուն սիրտով գուրգուրաց, փայփայցեց հայ մանուկները եւ զանոնք արժանացուց մայրական անկեղծ սիրոյն: Հայ որբերը պաշտամունքի սէր տածեցին այս պատուական կնոջ հանդէպ, որ եկած հայերէն սորված էր ու այժմ իր կեանքը կ'ընծայէր անոնց: Տասնեակ տարիներով սերունդներեկան անվերջ ճանչնալու ՄԱՄԱ իր բոլոր աստուածատուր շնորհներուն եւ առաքինութիւններուն համար:

Մահուան ձորէն անցած Մարի-

ան, ուր կար միայն աւեր ու արտասուք եւ մահը իր թեւերը տարածած կը հնձէր անմեղ կեանքեր, ան բերաւ կեանք, յոյս, փրկութիւն, բերկրութիւն, գուարճութիւն: Անսուադողութենէ գետնին փռուած մանուկներուն, ամբողջովին կմախքացած, ան ոտքի հանեց, յարութիւն տուաւ մեռեալ մանուկներուն, յոյս ներշնչեց ապագայի եւ զիրենք գօտեպնդեց հաւատքով ու սիրով:

Մարիան, անտարակոյս, վիթխարի ծառայութիւն մատուցեց հայ ժողովուրդին անոր օրհասական օրերուն: Ան վաղուց փակած է իր աչքերը (1960), սակայն մեր ազգը կը մնայ անվճար պարտապան անոր կատարած բերաւոր բարիքներուն դիմաց:

Սերունդներ պիտի գան ու խոնարհին անոր խնկելի յիշատակին առջեւ եւ հիանան անոր սքանչելի գործերով, մարդասիրական արարքներով:

ՄԱՄԱՅԻՆ յիշատակը թող վառ մնայ ու անմեռ մեր սիրտերէն ներս: Այս առիթով, մեր գնահատութիւնը նաեւ Դանիացի բարեգործ ժողովուրդին, որ սատար հանդիսացաւ հային բարոյապէս եւ նիւթապէս եւ Բարի Սամարացիին նման ձեռք կարկառեց վիրաւորին, լքուածին, անոքին:

Պատիւ Դանիացի ժողովուրդին որ իր ծոցէն հանեց Մարիաներ, որ ապրեցան ու գործեցին յանուն մարդկութեան բարօրութեան, ծաղկման ու բարգաւաճման:

Լոյս մշտնջենի ՄԱՄԱՅԻՆ գերեզմանին, որ ցարդ կը գտնուի «Թուչնոց Բոյն»-ի սրտին վրայ: Ան կը հանգչի անքոյթ՝ յաւիտենապէս՝ իր առաքելութիւնը ամենայն խղճմտութեամբ կատարած ըլլալու գոհունակութեամբ:



## Guiliguian Benevolent Foundation Champagne Brunch Buffet

Sunday, July 17, 2016 at 11AM

Raffi's Catering and Banquet  
3887 E Sierra Madre Blvd; Pasadena, CA 91107

Donation: \$25

The proceeds will support the reconstruction and restoration of Guiliguian School

Unlimited Champagne Mimosas  
Menu includes fowl, mamunyah, soujukk/eggs, variety of coldcuts and cheeses, fruit, dessert, and juices

For reservations, please call the following numbers:  
(818) 468 - 3648 (818) 307 - 4156 (626) 797 - 8465

Let's get together and enjoy a unique Champagne Brunch Buffet for your Sunday Guiliguian Joy



ԼՈՐԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ

ՅԱՐՈՒԹ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

Կազմակերպութեամբ՝  
ԹԵՔԵԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԵԱՆ  
Lnu ԱճճԵԼՍԻ Մասնաճիւղին

## ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ COMEDY NIGHT

Ամենօրեայ մեր կեանքէն պատասիկներու ներկայացումներով

Մասնակցութեամբ  
ԼՈՐԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ (Անգլերէն)  
ՅԱՐՈՒԹ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ (Հայերէն)

Այտրժաբեր համադրամներով սեղաններու շուրջ

ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 30, 2016  
Երեկոյեան 7:30-ին

ԹՄՄ ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ ՍՐԱՀ  
1901 N. Allen Avenue, Altadena, CA 91001

ՍՈՒՏՔԸ \$45

### ԿՈՒԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԸ

Կուկաթայի Հայոց Մարդասիրական ծեմարանը հիմնադրուել է 1821թ. հնդկահայ համայնքի նախաձեռնությամբ եւ մինչեւ 1870թ. ունեցել է իր ինքնուրույն կրթական ծրագիրը, սակայն յետագայում այն համապատասխանեցուել է Կուկաթայի համալսարանի քննական պահանջներին:

1999թ. Կուկաթայի Գերագույն դատարանի որոշմամբ ճեմարանը յանձնուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խնամակալութեանն ի դէմս Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Նոյն որոշմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին է վերապահուել ճեմարանի գործունէութիւնը տնօրինելու իրաւունքը: Վերահսկուել են ուսումնական ծրագրերը, կադրային նշանակումները, դպրոցի վիճակն ու խնամքը:

Ճեմարանն ունի բուժարան, մարզասենեակ, լողավազան, տղաների եւ աղջիկների համար նախատեսուած առանձին կացարաններ: Ճեմարանում գործում է 1828թ. հիմնադրուած «Արարատեան» գրադարանը:

Ներկայում հաստատութիւնում ուսանում են աշակերտներ առաւելապէս Հայաստանից:

Ճեմարանն ունի պաշտօնական կայք՝ [www.armeniancollege.edu.in](http://www.armeniancollege.edu.in), ինչպէս նաեւ ֆէյսպուքեան էջ:

#### ԾԵՄԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՎԱՅՄԱՆՆԵՐԸ

Ճեմարան կարող են ընդունուել 8-ից 11 տարեկան պատանիները: Ընդունելութիւնը կատարուում է հարցազրոյցի հիման վրայ, որը տեղի է ունենում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի անմիջական ղեկավարութեամբ: Հնդկաստանի մուտքի արտօնագրի տրամադրման վճարը եւ ճանապարհածախսը հոգում է ճեմարանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համապատասխան ծառայութեան միջոցով:

Ճեմարանը երեք տարին մէկ հոգում է աշակերտների՝ ամարային արձակուրդներին Հայաստան մեկնելու եւ վերադառնալու ճանապարհածախսը, իսկ միջանկեալ ժամանակահատուածում նրանք կարող են այցելել Հայաստան սեփական միջոցներով:

Հարկ է նշել, որ ճեմարանի ղեկավարութիւնը, որպէս օրինական խնամակալ, ետ է ուղարկում Հայաստան ՀՀ քաղաքացի հանդիսացող արական սեռի շրջանավարտներին՝ պարտադիր ժամկետային զինուորական ծառայութիւնն անցնելու նպատակով:

#### Կրթութիւնը

Ճեմարանը հայկական թե-



քումով անգլիալեզու միջնակարգ դպրոց է: Ճեմարանում բացի հայագիտական եւ բնագիտական առարկաներից աշակերտները սովորում են նաեւ հնդկերէն: Հայաստանից գործուղուած մասնագէտների կողմից հայերէնով դասաւանդուում են Հայոց լեզու, Հայ գրականութիւն, Հայոց պատմութիւն, Հայ եկեղեցու պատմութիւն, Հայ երգ-երաժշտութիւն առարկաները: Մանկավարժները գործուղուում են Կուկաթայի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից: 10-ամեայ միջնակարգ կրթութիւնը բարեցալու աւարտած եւ համապատասխան վարքագիծ դրսեւորած սաները կարող են կրթութիւնը շարունակել Կուկաթայի քաղաքի լաւագոյն աւագ դպրոցներում (Լա Մարտինիեր, Լորեոս, Կալկաթայի Միջազգային դպրոց եւ այլն):

Մաների կեցութեան, ուսման, հագուստի եւ գրենական պիտոյքների ծախսերն ամբողջովին հոգում է ճեմարանը:

#### Պահանջվող փաստաթղթերը

1. Անձնագիր (առնուազն չորս տարուայ վաւերականութեամբ):
2. Մտողների կամ խնամակալի կողմից նոտարով հաստատուած համաձայնագիր՝ ճեմարանում ուսանելու համար:
3. Մկրտութեան վկայական (մկրտուած չլինելու դէպքում մկրտութիւնը կատարուում է ճեմարանում):
4. Դպրոցի վիճակագրոյց (առաջադիմութեան թերթիկ):
5. Բժշկական տեղեկանք առողջութեան վերաբերեալ:
6. Բոլոր ոչ անգլերէն փաստաթղթերը ենթակալ են անգլերէն թարգմանութեան՝ նոտարական վաւերացմամբ:
7. 4 լուսանկար (3.5սմ x 4.5սմ):

#### Բժշկական ապահովումը

Ճեմարանն ունի բժիշկ, ով շաբաթը երկու անգամ պարտադիր այցելում է աշակերտներին: Առողջական գանգատների դէպ-

քում աշակերտի գննութիւնից չետոյ նշանակուում է համապատասխան բուժում, իսկ անհրաժեշտութեան դէպքում նա տեղափոխուում է հիւանդանոց: Առկալ է նաեւ շուրջօրեայ բուժքրոջ հաստիք, որն այժմ ժամանակաւորապէս թափուր է (ընդունելութեան համար տրուած է յայտարարութիւն): Բժշկական բոլոր ծախսերը հոգում է ճեմարանը:

#### Սննդակարգ

Ճեմարանն ունի ճաշարան, որտեղ աշակերտները սնուում են օրը երեք անգամ: Նրանք նաեւ թեթեւ ուտեստներ են ստանում երկար դասամիջոցին եւ կէսօրից յետոյ ազատ ժամանցին: Յաճախ աշակերտներին տրուում են անհրաժեշտ մթերքներ եւ նրանք պատրաստում են թխուածքներ կամ ազգային ուտեստներ:

#### Հիգիենայի պայմանները

Ճեմարանն ունի լուացքատուն, որտեղ լուացում եւ արդուկում է աշակերտների հագուստը: Իւրաքանչիւր շաբաթ նրանք ստանում են մաքուր անկողին:

Ննջասենեակների, սանհանգոյցների, դասարանների մաքրութիւնը ապահովում են հաւաքարարները: Տարածքի մաքրութիւնն ու այգու խնամքը կատարուում են բակային աշխատողների կողմից:

Աշակերտները ստանում են համազգեստ, կօշիկ, սպորտային հագուստ, ներքնաշորեր եւ անձնական հիգիենայի բոլոր պարագաները:

#### Էքսկուրսիաները եւ ուխտագնացութիւնները

Ճեմարանի տեսչութիւնը ուսուցչական կազմի հետ միասին յաճախակի կազմակերպում է տարբեր ուղիքներով կրթադաստիարակական եւ ճանաչողական էքսկուրսիաներ Կուկաթայի զանազան թանգարաններ, տեսարժան վայրեր, իսկ ամառային արձակուրդների ժամանակ նաեւ կազմակերպում են այցերը գբօսայգիներ ու ժամանցի վայրեր:

Իւրաքանչիւր կիրակի աշակերտները մասնակցում են Կուկաթայում կամ Հնդկաստանի Արեւմտեան Բենգալ նահանգի այլ քաղաքներում գոյութիւն ունեցող հայկական եկեղեցիներից որեւէ մեկում մատուցող սուրբ պատարագին, որի ընթացքում տղաների մի մասն ըստ ցանկութեան սպասուորուում է սուրբ խորանում, իսկ աղջիկները որպէս դպրաց դաս երգում են երգչախմբում:

#### Կապը հարազատների հետ

Շաբաթը մէկ օր աշակերտներին տրուում է հնարաւորութիւն ճեմարանի գրադարանից Skype ծրագրի միջոցով կապ հաստատել եւ գրուցել իրենց հարազատների հետ (արձակուրդների ժամանակ՝ աւելի յաճախ):

Աշակերտների ննջարանում առկալ է քաղաքային հեռախօս եւ նրանց հարազատները կարող են զանգահարել սահմանուած ժամերին:

Մինչ դպրոցն աւարտելը աշակերտներին արգելուում է ունենալ բջջային հեռախօսներ եւ պլանշետներ, իսկ առկայութեան դէպքում դրանք պահուում են տեսչութեան մօտ եւ վերադարձուում են արձակուրդների ժամանակ:

Ճեմարանի տարածքում տեղադրուած տեսախցիկների միջոցով հնարաւոր է առցանց հետեւել ճեմարանի բակում ու մարզադաշտում աշակերտների երեկոցեան ժամանցին:

#### Հարազատների այցելութիւնները

Աշակերտների հարազատները, նախապէս տեղեկացնելով, կարող են այցելել երեխաներին: Այդ պարագայում ճեմարանի տեսչութիւնը նրանց տրամադրում է ժամանակաւոր կացարան:

#### Դպրոցի տարածքը

Ճեմարանն ունի մօտ հինգ հազար քառակուսի մետր խնամուած տարածք, որտեղ աշակերտների համար առկալ են կրթութեան, կեցութեան եւ ժամանցային գրեթէ բոլոր պայմանները, ներառեալ համակարգչային, հեռուստացոյցի, արուեստի, երաժշտութեան սենեակները, գրադարանը, ընդարձակ դահլիճը, մարզադաշտը, մարզասրահը, լողավազանը (այն գտնուում է վերանորոգման փուլում), լուացքատունը՝ կարելու եւ արդուկելու համար նախատեսուած կից բաժիններով:

#### Անվտանգութիւնը


Ճեմարանի ողջ տարածքը շրջապատուած է բարձր, ամուր ու անանցանելի պարսպով: Գոյութիւն ունի մէկ հիմնական մուտք՝ կրկնակի դարպասներով, որտեղ 24-ժամեայ ծառայութիւն են իրականացնում անվտանգութեան աշխատակիցները: Ճեմարանի ողջ տարածքը վերահսկուում է տեսախցիկներով:

Առանձին դէպքերում աշակերտները ճեմարանի տարածքից կարող են դուրս գալ միայն վերակացուի թուղթութեամբ ու անցաթղթով՝ աւագ ուսանողներից մէկի ուղեկցութեամբ: Իսկ աւագ դպրոցների կամ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների ուսանողները պէտք է ճեմարան վերադառնան սահմանուած ժամից ոչ ուշ:

#### Աշակերտների քանակը

Այժմ ճեմարանում ընդհանուր առմամբ բնակուում է 54 հոգի, որոնցից 40-ը ճեմարանի աշակերտներն են, իսկ միւսները ուսանում են քաղաքի աւագ դպրոցներում կամ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում:

Ճեմարանը հնարավորութիւն ունի ընդունելու 200 աշակերտ:



**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry

---

1111 S. Glendale Avenue  
Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Tel: (818) 547-1476

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ**

ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՀՈԳԻԻ ՀԱՍԱՐ)  
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՍԱՆՐԱՍՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



### ԿՆՈՋԱԿԱՆ ՌԻՇԻՍՈՒԹԻԻՆԸ Կ'ԱԶԴԻ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ

Հետաքրքրական է, թե տղա-մարդիկ ինչպես կը պատկերացնեն կատարեալ կիրնը: Ոչ մէկուն համար գաղտնիք է, որ ուղեղը շատ արժէքաւոր որակ է: Իսկ նոր հետազոտութիւն մը ցոյց տուած է, որ կիրնը մօտ ուշիմութեան բարձր մակարդակը կրնայ երկարաձգել ամուսինին կեանքը եւ կանխել թուլամտութիւնը: Հետազոտութիւնը պարզած է նաեւ, որ մարդու շրջապատը լրջօրէն կ'ազդէ անոր մտային կարողութիւններուն վրայ:

Ըստ գիտնականներու բացայայտումներուն՝ տղամարդիկ, որոնք կը նախընտրեն ամուսնանալ խելացի կիրներու հետ, աւելի երկար եւ երջանիկ կ'ապրին ու աւելի քիչ կը տառապին Ալցհէյմըր հիւանդութեամբ: Հոգեկան առողջութեան փրօֆէսըր Լորենս Վոլին կ'ըսէ. «Եթէ տղամարդը կը փափաքի երկար կեանք ունենալ, պայմաններ

ընէ մէկը՝ խելացի կիրնը հետ ամուսնանալն է: Աւելի լաւ պաշտպանութիւն թուլամտութեան, քան ուշիմութիւնը՝ գոյութիւն չունի»: Այն աղջիկները, որոնք կը հպարտանան իրենց ուշիմութեամբ, կը մեծնան աւելի պատասխանատու եւ անկախ: Այն տղաքը, որոնք կը կիրեն այդպիսի մտածելակերպը՝ լաւ յարաբերութիւններ կ'ունենան կիրներու հետ եւ բարենպաստ մթնոլորտ կը ստեղծեն իրենց կիրներուն ու դուստրերուն համար: Բնականաբար դժուար է մարդոց հասկցնել, որ կիրներու ուղեղը պէտք է աւելի բարձր գնահատուի զեղեցկութեան, այդ պատճառով այս հետազոտութիւնը նրբանկատօրէն կը յուշէ, որ ամուսնութեան մասին մտածող տղամարդը, որ աւելի մեծ կարեւորութիւն կու տայ ուշիմ կիրներու, նախապէս կը մտածէ իր մարմնական եւ հոգեկան առողջութեան մասին:

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՆՈՋ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆՇ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԲՆՈՐՈՇ ԵՆ

Անդրադառնալով ժամանակակից կիրնը հոգեբանական գարգացումներուն՝ հոգեբանները կը նշեն, թէ աշխարհը միասնական, համասեռ տարածք է, եւ տարբեր մշակոյթներով տարածաշրջաններու մէջ կ'ընթանան տարբեր, երբեմն ալ հակադիր գարգացումներ: Արեւմուտքի քրիստոնէական երկիրներուն բնորոշ է բարբերութեամբ ազատականացումը, սեռական յեղափոխութիւնը, կիրներու իրաւունքներու, հաւասարութեան ապահովման եւ խտրականութեան վերացման միտումները, հասարակութեան մէջ կանանց դերի բարձրացման ձգտումը:

Միւս կողմէ, մահմետական շատ երկիրներ դեռ շատ հեռու են այսօրինակ գարգացումներէն, իսկ որոշ երկիրներու մէջ նոյնիսկ կը դիտուին հակառակ գարգացումներ, աւելի շատ ուշադրութիւն կը դրաւեն հակասեռական դրսեւորումները, վերադարձ կը կատարուի նահապետական բարբերուն եւ խիստ չափանիշներուն ու աւանդոյթներուն:

Երկիրներ կան, ուր կիրները ընտրական իրաւունք, նոյնիսկ ինքնաշարժ վարելու իրաւունք չունին: Ձարգացման միւս կարեւոր ուղղութիւնը այն է, որ մենք կ'ապրինք անհատա կա նացման ժամանակ:

### ԲԵՐԱՆԻ ՀԱՄԸ ԻՆՇ ԿՐԱՅ ՊԱՏՄԵԼ ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բերանի համին վրայ կրնան ազդել մեր օգտագործած դեղերը կամ ուտելիքները, բայց եթէ դուք անսովոր բան մը չէք կերած, այդ համը երբեմն կրնայ մատնանշել մարմնին մէջ գարգացող հիւանդութիւնները:

Մասնագէտները նկարագրած են բերանի համի տարբեր նրբերանգները եւ մատնանշած են այն հիւանդութիւնները, որոնց հետ անոնք կրնան կապուած ըլլալ. \* քաղցրահամ. ատիկա նոր սկսած շաքարախտի հնարաւոր ախտանիշ է կամ ալ՝ ատամնաբուժական խնդիրներու, \* աղի համը կրնայ ԼՈՐ հիւանդութիւններու, ջրազրկման ազդանշան ըլլալ, \* թթու համը կրնայ ստամոքսի կամ ենթաստամոքսային գեղձի գարգացող խոցի նշան ըլլալ, \* լեղի համը կրնայ մատնանշել լեղապար-

նակաշրջանի մէջ: Ինչպէս սեփական կեանքը ճիշդ տնօրինելու, այնպէս ալ այլոց հետ արդիւնաւէտ փոխ յարաբերութիւններ կառուցելու համար շատ կարեւոր կը դառնայ թէ՛ իր եւ թէ՛ դիմացինին անհատականութիւնը լաւ ճանչնալը: Իսկ ամենակարեւոր գարգացումը հաւանաբար այն է, որ ամբողջ աշխարհի մէջ կիրները եւ աղջիկները սեփական կեանքը ինքնուրոյնաբար տնօրինելու, կարեւոր որոշումները ինքնուրոյն կայացնելու եւ անկախանալու աւելի ու աւելի մեծ հնարաւորութիւններ կը ստանան:

Համացանցը, հասարակական կայքերը, միջմշակութային շփումները... այս ամէնը կը կատարեն իրենց գործը, եւ նոյնիսկ մահմետական երկիրներու մէջ կիրներ լաւ կը հասկնան, որ իրենք կրնան աւելի ազատ եւ անկախ ըլլալ: Պատահական չէ, որ աւելի ազատ բարբերով երկիրներ մեկնելու ժամանակ անոնք իրենք զի իրենք շատ աւելի ազատ, անկաշխանդ եւ համարձակ կը պահեն: Գլխաւոր միտումը, այսպիսով, կիրներու ազատութեան աստիճանի մեծացումն է: Ատիկա որքան կը մեծցնէ կիրներու անկախութեան ու ինքնավարութեան աստիճանը, նոյնքան ալ կը մեծցնէ անոնց պատասխանատուութիւնը սեփական կեանքի համար:

Կիր, լեարդի, կասթրիթի հետ կապուած խնդիրներ, \* մետաղական համը կրնայ լեղապարկի խնդիրներու, ինչպէս նաեւ ցած թթուայնութեամբ կասթրիթի նշան ըլլալ, \* «հոտած» համը կրնայ մարսողական համակարգին մէջ բնածին պաթոլոլիայի կամ կասթրիթի նշան ըլլալ: Այդ տհաճ ախտանշաններուն հետ կապուած՝ մասնագէտներուն խորհուրդները կը վերաբերին սննդակարգի եւ ամէն օրեայ սնունդի կարգաւորման. հրաժարիլ տապկուած, աղի, կծու սնունդէն, բացառել շատակերութիւնը եւ գիշերները ուտելը: Բայց պէտք է յիշել, որ տհաճ համը ոչ թէ հիւանդութեան, այլ հիւանդութեան ախտանշանն է: Այդ պատճառով, անոր ի յայտ գալու պարագային, անհրաժեշտ է առնուազն խորհրդակցիլ բժիշկի հետ:

### ՀԱՄԲՈՅՐՆԵՐԸ ԱՆՐՈՒԹԵՇՏ ԵՆ ԵՐԻՏԱՄԱՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԵՒ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Համբոյրները կը մարզեն մկանները... Մարդիկ երկար ժամանակ կը թերագնահատէին համբոյրներուն օգտակարութիւնը. Իրականութեան մէջ, ըստ գիտնականներու, համբոյրները աւելի օգտակար են, քան կը կարծուէր: Գիտնականներու կատարած հետազոտութիւն մը ցոյց տուած է, որ համբոյրները մարդոց կ'օգնեն ազատելու կնճիռներէն, այդ հաճելի գործընթացի ժամանակ մորթը կը դառնայ աւելի ողորկ եւ հարթ: Իսկ եթէ երիտասարդները բաւականաչափ կը համբուրուին, աւելի դանդաղ կը ծերանան, քան իրենց այն տարեկիցները, որոնք կը խուսափին նման փաղաքշանքներէ, որովհետեւ համբոյրները նաեւ կ'ունենան կանխարգելիչ ազդեցութիւն: Ատիկա կապուած է այն բանի հետ, որ համբոյրի ընթացքին աշխատանքի մէջ կը մտնեն դէմքի բազ-

մաթիւ մկաններ, որոնք այլ պայմաններու մէջ կրաւորական կը մնան եւ աստիճանաբար կը կորսնցնեն իրենց ազդեցութիւնը: Այսպիսով՝ համբոյրները դէմքի մկաններու մարզում են: Համբոյրները նաեւ կ'օգնեն ամրապնդելու դիմադրողականութիւնը, որովհետեւ այդ ընթացքին բերանի լորձաթաղանթ կ'անցնին մանրէներ, որոնց նկատմամբ մարմինը հակամարմիններ կ'արտադրէ: Պարզուած է, որ գուզակներէն բերանին մէջ մանրէներու 80 տոկոսը կը համընկնի, իսկ մնացեալ 20 տոկոսը տարբեր է: Երբ նման մանրէները կը յայտնուին այլ մարմնի մէջ, տեղի կ'ունենայ դիմադրողականութեան խթանում: Համբուրուողներուն մօտ նաեւ կ'արտադրուի «երջանկութեան հորմոն»՝ էնտրոֆին, որ մարմնին անհրաժեշտ է ճնշուած իրավիճակներու ժամանակ:

### ՄԱՅՈՒՆ ՅՈԳՆԱԾՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԸ

Մնայուն յոգնածութեան նշանը իբրեւ ախտորոշում ընդունուած էր դեռ 35 տարի առաջ: Մինչեւ այժմ բժիշկները կը վիճին անոր նախապատճառի մասին: Ոմանք կը կարծեն, որ անիկա կը յայտնուի երբ մարդիկ վարակուած են որեւէ հիւանդութեամբ, ուրիշներ կը մտածեն, որ այս հիւանդութեան հակուած են այն մարդիկ, որոնք կ'ապրին վատ բնապահպանական գոտիի մէջ: Բժիշկներու այլ խումբ մը փորձած է ապացուցել, որ այս ախտանիշը ի յայտ կու գայ մարմնին մէջ անհրաժեշտ տարրերու պակասի պարագային: Բոլորը, սակայն, միաձայն կ'ըսեն, որ մնայուն յոգնածութեան նշանը աւելի յաճախ կը պատահի չհաշուեկշռուած զգացմունքային-մտաւոր ծանրաբեռնուածութեամբ մարդոց, որոնք շատ քիչ կ'աշխատեն իրենց մարմինը: Մնայուն յոգնածութեան նշանը մտաւոր աշխատանք կատարողներու հիւանդութեան: Այս նշանը կ'ուղեկցուի մշտական յոգնածութեան զգացումով, որ չանցնի, նոյնիսկ երկար հանգիստէ ետք: Ինչպէս չաղթահարել մնայուն յոգնածութեան նշանը: -Շատ չլուծուած խնդիրներ: Մարդը մշտապէս յոգնածութիւն կը զգայ շարք մը խնդիրներու կուտակումէն, որոնք երկար ժամանակ չեն լուծուիր: Ի դէպ, խնդիրները կրնան ըլլալ ե՛ւ իրական ե՛ւ մտածուած:

Խնդրի լուծումը՝ գնեցէք համապատասխան գրականութիւն, յաճախեցէք ժամանակը կարգաւորելու դասերու: Եւ յիշեցէք՝ չկան խնդիրներ, այլ կան տհաճ որոշումներ: -Մարդը շատ բան կ'ընէ «պէտք» է ցուցակէն եւ ոչինչ «կը փափաքիմ» ցուցակէն: Ան ընդհանրապէս ունակ չէ լսելու իր ներքին ձայնը: Բայց չէ՞ որ ցան-

կութիւնները շատ կարեւոր են մնայուն յոգնածութեան նշանը չաղթահարելու համար: Խնդրի լուծումը՝ կազմել փափաքներու ցուցակ եւ սկսիլ իրա կանացնել զանոնք: Սկիզբի համար շաքար մէկ անգամ ըրէք մէկ «պէտք չէ»: Ստեղծագործել, փոքր հաճոյքներ, շարաճճիութիւններ, մարմնի խնամք առանց մեղքի զգացումի, որ շատ ներուժ կը հաղորդէ: -Վատ քուն: Լաւ ինքնազգացողութեան համար պէտք է օրական 7-8 ժամ քնանալ:

Կը տանջուի՞ք անքնութեան եւ անդադար կը կանգնի՞ք միեւնոյն մտքերուն վրայ: Խնդրի լուծումը՝ գացէք հոգեբանի մօտ: Լուծեցէք ձեր խնդիրը եւ հանգիստ քնացէք: Լաւ քունը հիւանդի գէնք է մնայուն յոգնածութեան դէմ պայքարին դէմ:

-Մեղաւորի եւ ամօթի զգացում, երբ որեւէ բան այնպէս չէք ընէր, ինչպէս ձեզմէ կ'ակնկալեն: Այս զգացողութիւնները կը յայտնուին առողջ զգացմունքներու փոխարէն եւ կը յառաջացնեն յաջորդ շերտը՝ անկարողութեան զգացողութիւնը: Խնդրի լուծումը՝ յաճախ ելք փնտրելու կամ օգնութիւն խնդրելու փոխարէն մենք կը քարանանք եւ կը յանձնուինք: Ատոր հա մար ալ մնայուն յոգնածութիւնը յաղթահարելու համար օգնութիւն խնդրեցէք: -Նոր տպաւորութիւններու բացակայութիւն: Խնդրի լուծումը՝ եթէ դուք նոյնիսկ նոր վերադարձած էք արձակուրդէն, կրկին գացէք: Թէկուզ կարծատեւ, բայց՝ որակով: Անպայման քաղաքէն դուրս ելէք: Ամէն պարագային, պէտք չէ վախնալ մնայուն յոգնածութեան նշանէն, անիկա ծեւրութեան նշան չէ: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### ԿԱՊՈՅՏ ԳՈՅՆԸ Կ'ՕԳՆԵ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Մասնագէտները պարզած են, որ կապուած գոյնի կարճատեւաժամկէտ ազդեցութեան յետոյ մարդը ընդունակ է աւելի արագ կայացնել բարդ որոշումներ: Ազդեցութիւնը կը տեւէ մինչեւ 40 վայրկեան: Հետազոտութիւնը նաեւ ցոյց տուած է, որ կապուած գոյնի 30 վայրկեան տեւող ազդեցութիւնը բաւական է մեծ ծանրաբեռնուած-

ծութեան ժամանակ ճիշդ արձագանգի եւ ճիշդ պատասխաններ տալու համար: Այդ ամէնը հետազոտուած է լոյսի ազդեցութեան յետոյ: Գիտնականներու կարծիքով՝ կապուած գոյնը կարելի է օգտագործել այն վայրերուն մէջ, ուր հարկաւոր է շուտ որոշումներ կայացնել, օրինակ օդաչուներու ինքիկին կամ վիրահատարաններու մէջ:

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**  
 Մանկութեան սորվածները քեզի յաջողութեան ճամբաները կ'առաջնորդեն: Օրէնքներու համեմատ կեանք մը ապրելով հանդերձ, յաճախ փորձութիւններու պիտի հանդիպիս: Իրաւունքներդ պաշտպանելու համար հաստատ մնացիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 11,15,22,26,33

**ՅՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**  
 Կարգ մը մարդոց իրենց արժէքներէն աւելի ուշադրութիւն կ'ուտաս եւ անոնք քու անկեղծութիւնդ չարաչար կը գործածեն: Պարտքեր մի դիզեր կարծելով թէ անոնք պիտի ներուիս քեզ: Փոխվրէժով կ'ուզես ինքզինքդ հանդարտեցնել:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,14,24,29,30

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** **Մայիս 21-Յունիս 20**  
 Շրջանակիդ իրողութիւններուն շատ լաւ ուշադրութիւն կը դարձնես եւ գիտակից ես, միեւնոյն ատեն լաւ կեդրոնացած ես նպատակակետիդ: Ստահողութիւններդ եւ միտքի զբաղումներդ շիտակ անձին դիմէ որպէսզի լաւ ուղղութիւն ստանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,8,13,21,35

**ԽԵՅԳԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**  
 Անիրաւ տեղը պիտի ամբաստանուիս, փորձէ համբերութեանք իրաւունքդ լաւ պաշտպանել: Կողակիցդ լաւ ճանչնալու եւ ամուսնական կեանքդ առողջ պահելու համար պէտք է ուշադրութեանք մտիկ ընես անոր խօսքերուն:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,15,27,30,32

**ԱՌԻԺ** **Յուլիս 23-Օգոստոս 22**  
 Այնպիսի մարդոց հետ յարաբերելու ես, ուր ընկերութիւն եւ անկեղծութիւն կրնաս գտնել: Ընտանիքիդ անդամներուն սխալները ազնուութեամբ սրբագրէ: Մի դժգոհիր երբ կողակիցդ գործիդ միջամուխ ըլլայ, կրնաս օգտուիլ անկէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 8,13,24,26,34

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**  
 Շատ կը գնահատես շուրջիներդ եւ կը վայելես անոնց տարբեր նկարագրի յատկութիւնները: Մեծ անակնկալ մը պիտի հիացնէ քեզ: Անկալածեղ աւելի լաւ ժամանակ պիտի անցընես բարեկամի մը այցելութիւն կատարելով:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,17,23,25,33

**ԿՇԻՈՔ** **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**  
 Հարցի մը նկատմամբ կեցուածդ բոլոր շուրջիներդ պիտի ցնցէ: Անձնագոհութեամբ եւ նուիրումով կը վերաբերիս ընտանիքիդ անդամներուն հետ եւ այդպէս ուրախ եւ յարգալի մթնոլորտ մը կը ստեղծես տանդ մէջ:  
 Բախտաւոր թիւերդ են: 5,11,21,29,34

**ԿԱՐԻՃ** **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**  
 Ընտանիքիդ հետ շրջապտոյտ մը քեզ աւելի պիտի մօտեցնէ իրենց, մօտէն ճանչնալու անոնց պէտքերն ու կարիքները: Լաւ գաղափարներ կան մտքիդ մէջ, սակայն զանոնք գործադրելու համար պէտք ունիս օգնութեան: Պարապ ժամերդ կարողալով անցուր:  
 Բախտաւոր թիւերդ են: 8,16,24,29,30

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**  
 Գործիդ յաջողութեան համար պէտք է վճռական ըլլաս եւ միեւնոյն ատեն կարեկցող: Ծայրահեղ միջոցներու կը դիմես երբ քիչ մը յուսալատիս կամ տրտմիս, համբերող եւ խիզախ եղիր: Գործի ճամբորդութեան առիթ մը պիտի ներկայանայ քեզի:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,12,23,25,31

**ԱՅԾԵՂՋԻՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**  
 Հանգիստի վայրէդ դուրս գալը մեծ ճիգի եւ քաջութեան կը կարօտի, մի տատամսի՞ր՝ այլ վստահէ կարողութիւններուդ: Նոր գործի ասպարէզ մը, մօտ ապագային պիտի իրականանայ: Ընտանեկան կեանքդ շատ լաւ կերպով կ'ընթանայ, ուրախ ես:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,14,23,34,35

**ԾՈՎԱՆՈՅՇ** **Յունուար 20-Փետրուար 18**  
 Միրած անձերուդ վրայ շատ կը մտածես եւ պատրաստ ես ամէն զնով զոհուելու անոնց երջանկութեան համար: Կեանքդ պէտք է դասաւորես եւ առողջութիւնդ առաջնակարգ տեղը դնես: Դուն քեզ պարտադրուած մի զգար ընելու չսիրածդ:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,11,12,27,32

**ՉՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**  
 Սպառնալիքներու բնաւ տեղի մի տար, այլ քու ցանկութիւններդ կատարէ: Միրոյ յարաբերութեանդ մէջ, պէտք է յաճախ ազդարարես դիմացինդ յառաջացող վտանգներէն եւ անոնց հետեւանքներէն: Մարգական խաղի մը ներկայ պիտի ըլլաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,15,21,28,33

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ «ՄԱՍԻՍ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ 35-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

«Մասիս» Շաբաթաթերթի հիմնադրութեան 35-ամեակին առթիւ՝ հետեւեալ նուիրատուութիւնները եղած են մեր օրկանի բարգաւաճման ֆոնտին, որոնց համար կազմակերպիչ յանձնախումբն ու թերթի աշխատակազմը շնորհակալութիւն կը յայտնեն:

- Տիար Նազարէթ Գեւորեան \$10,000
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Հայկօ Գալթաքճեան \$5,000
- Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճեմեան \$5,000
- ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութիւն \$3,000
- ՄԳՀԿ Ժիրայր Մուրատ Մասնաճիւղ (Baton Rouge) \$2,000
- Տէր Գառնիկ Աւագ ՔՅՆՅ. Հալլաճեան \$2,000
- Տէր եւ Տիկ. Պերճ Սեդրակեան \$1000
- Տէր եւ Տիկ. Ռուբէն եւ Ռիթա Աֆշարեան \$1000
- Իրանահայ Միութիւն \$1000
- Տօթք. Ակոբ եւ Տիկ. Լուդվիկա Անդապլեան \$1000
- Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան \$1000
- Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէրօղլեան \$1000
- Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Հանրիէթ Գուզուլեան \$1000
- Mr. Sami Ara Kobrosi \$1000
- Տէր եւ Տիկ. Ալպէրթ Աբգարեան \$750
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$500
- Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեան \$500
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյաճեան \$500
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուս Գրիգորեան \$500
- Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան \$500
- Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան \$500
- Տէր եւ Տիկ. Ասատուր Կիւզելեան \$500
- Տէր եւ Տիկ. Վահէ եւ Նորմա Իմաստունեան \$500
- Տէր եւ Տիկ. Արմէն եւ Ռիթա Պարանեան \$500
- Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազեզեան \$500
- Տէր եւ Տիկ.Կարպիս եւ Շաքէ Պալլաքճեան \$500
- Տէր եւ Տիկ. Վրէժ եւ Արմիկ Թօմպուլեան (Vrej Pastry) \$500
- Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մակարեան \$500
- Տէր եւ Տիկ. Վարդիվար եւ Օսկի Անթոնեան \$350
- Մի ոմն \$350
- Մի ոմն \$300
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Օսաննա Տաքէսեան \$300
- Տէր եւ Տիկ. Վարդան Իմաստունեան \$300
- Տէր եւ Տիկ. Մարդին եւ Ասողիկ Խաչատուրեան \$300
- Տէր եւ Տիկ. Վարդան Լիպարիտեան \$300
- Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Մարալ Թաւուքճեան \$300
- Ampqua Bank Տնօրէն Աւօ Մարգարեան \$250
- Տիկ. Ֆլորա Տունայեան \$250
- Տիկ. Մայրանուշ Տազքեսեան \$200
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան \$200
- Տէր եւ Տիկ. Եփրեմ եւ Վարսենիկ Պաղպուտարեան \$200
- Տիկ. Աքնէս եւ Տիկ. Մայրանուշ Ճերեճեան \$200
- Տիկ. Անահիտ Թովմասեան \$200
- Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեան \$200
- Տէր Տիկ. Յարութիւն եւ Շուշիկ Մոլոյեան Վարդանեան \$200
- Տէր եւ Տիկ. Մանուէլ Կիւզելեան \$200
- Տօթք. եւ Տիկ. Ռուբէն եւ Շողիկ Եղսրզեան \$100
- Տօթք. եւ Տիկ. Յարութ եւ Մայտա Եղսրզեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարդան Լերանեան \$100
- Տէր եւ Տիկ. Տէրօ Ազիզեան \$100
- Տէր եւ Տիկ. Մանուկ Կէտէրեան \$100
- Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Սիրարփի Սեֆերեան \$100
- Տէր եւ Տիկ. Մարգիս եւ Նորա Գալթաքճեան \$100
- Տէր եւ Տիկ. Սիմոն Սիմիթեան \$100
- Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Նինա Թափանեան \$100
- Տիար Յովհաննէս Պալայեան (Քաջ Նազար) \$100
- Տէր եւ Տիկ. Սահակ Թութճեան \$100
- Տիկ. Ատրինէ եւ Լիլիան Մաղըրեան \$100
- Տիկ. Մայտա Սերայտարեան \$100
- Տէր եւ Տիկ. Մարգիս եւ Հայկունհի Փաթափութեան \$100
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Պերթա Թոփալեան \$100
- Մի ոմն \$100
- Մի ոմն \$100

### ԶՈՒԹԱԿԱՅԱՐԸ

Շարունակուած էջ 14-էն  
 Նորդիր զուգարան:  
 Նրա բաճկոնը աթոռին էր յազգուած, այդ մարդը մի գունդ դրած հանեց եւ դրեց նրա բաճկոնի ծոցը, այդ արաւ նրա բացակայուած  
 Թեան, ոչ էլ իմաց տալով:  
 Նրա այս արարքը ուրախութեան արցունքներ բերին աչքերիս, սրտումս պռաւօ ասացի նրան որակելով՝ ահաւասիկ զթասիրտ, ազնուասիրտ եւ բարերար մարդը:

ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ

ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով հետեւեալները իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն եւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն «Մասիս»ին:

- Գալուստ եւ Լենա Տէրտէրեան \$100
- Sahara Գրիգորեան եղբայրներ \$100
- Վազգէն եւ Պերթա Թոփալեան \$50
- Էլի եւ Ազատուհի Թոփալեան \$50
- Զոհրապ եւ Անժիք Թոփալեան \$50

ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ

ԼՈՒՍԻՆ ՃԷՊԷՃԵԱՆ-ԷՔՄԷՔՃԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղած են «Մասիս» Շաբաթաթերթին:

- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան \$100
- Հայկազուն Մահտեսեան \$50
- Սարգիս, Նուպար, Գէորգ Սէֆէրեան \$50
- Ռաֆֆի Մառուկեան \$50

ՃՇԴՈՒՄ

ԼՈՒՍԻՆ ՃԷՊԷՃԵԱՆ-ԷՔՄԷՔՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով իր դուստրը Մատլէն էքմէքճեան իր նուիրատուութիւնները ցանկին մէջ (Լոյս տեսած մեր նախորդ թիւով) պէտք է աւելցնել նաեւ Ս.Գ.Հ.Կ. Արսէն Կիտուր Մասնաճիւղին եղած 100 տոլարի նուէրը:

Ն.Ա.Ս.Ս ԱՐՈՒԵՍԻ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Կը Կազմակերպէ

ԱՍՍՈՒՆԵԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Տարիքային Բոլոր Խումբերու Ըամար

Ղեկավարութեամբ՝

Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր,

Ասմունքող Եւ Ըռուստալրագրող

ՆՈՒՆԷ ԱԵՏԻՍԵԱՆԻ

Փորձերը տեղի կ'ունենան

ԸԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ

1060 N.Allen Ave. Pasadena, CA 91104

Արձանագրութեան Ըամար Դիմել՝

Տիկ. Արմինէ Լաչինեանին Ըեռ. 626-372-4662

Պր. Յարութ Տերվիչօղլեանին Ըեռ. 323-351-8001

Ո՞Ր Է ԶԱԼԵՊԱՅԱՅԵՐՈՒՄ ՏԵՂԸ

Շարունակուած էջ 14-էն

պատերազմը կեցնելու ու քաղաքը փրկելու վերջնական չքացումէ: Չե՞ն կրնար, շատ լաւ ալ կրնան, սակայն, կ'ուզե՞ն»: Կը գոչէ Յակոբ Միքայէլեանը իր վերջերս ստորագրած «Անտէրութիւն» յօդուածով:

Տասնըվեց պատմուածքներով եւ տասներեք խոհազրուութիւն-ձեպանկարներով Հայկալի առօրեային հետ իր անձնական մտերիմ պահերուն հաղորդակից կը դարձնէ մեզ Յակոբը: Մեծ քաղաք Հայկալին պատահաններէն ներս կատարուած կեանքի մանրամասնութիւններէն մինչեւ մանր-մուկը բամբասանքներուն արագավազ շրջանառութիւնը - ի չգոչէ քսանմէկերորդ դարու տեղեկատուական միջոցառումներուն - արմանք-զարմանք կը պատճառեն ընթերցողին:

Յակոբ Միքայէլեանը մանկութեան տարիներէն անցած է այն փորձառութենէն երբ եւրոպական երկիրներուն Հայկալի վրայ տեղացնող ռմբակոծումին պատճառով պատուհանները պէտք էր մուգ կապոյտ ներկուէին, կամ՝ օրաթերթեր փակցնելով ապակիները փակէին որ լոյսը չթափանցէ դուրս, (1940-ական)- համալսարանական տարիներուն արաբ-խալիպեան պատերազմէն հազիւ-հազ Մայրաքաղաք Դամասկոսէն ողջ-առողջ Հայկալ կը հասնի (1967), իսկ այս օրերուն ալ դիպուկահարուող ու ռմբակոծուող Հայկալէն հասած է Երեւան, հայրենի հողին վրայ կը գտնուի մէ՛կ հաստատակամ յայտարարութեամբ՝ «Մենք իր մէջ ըլլալէն աւելի ան մեր մէջն է...»

Այո՛, Հայրենիքը...ամէն մէկ սփիւռքահայուն հոգիին մէջն է...

Բայց ո՞ւր մնաց Յակոբին տաղանդին շարունակական փայլքը: Մէկ տեղ մնալով, ճանաչում գտնելով ինքզինք արդարացնող իր արդար վաստակին համբաւը վայելելու: Մէկ տե՞ղ: Ո՞ւր սակայն: Ո՞ւր է Հայկալահայուն տեղը:

Կը կարգամ .. ու կ'անդրադառնամ այն մղոններու անաւոր ճամբորդութիւններու մէջ երկարող տարածութեան, որ ամէն մէկ ցեղասպանութենէն վերապրողին եւ անոնց սփիւռքահայ գաւազներուն

վիճակուած է...

Յակոբին Ձէյթունցի ծնողքին փոշին Հայկալի հողին խառնուած է...

Յակոբին, քոյրերուն եւ անոնց գաւազներուն եւ թոռնիկերուն ճանապարհորդութիւնը կը շարունակուի մէկ ցամաքամասէն միւսը:

Կը կարգամ, կը ժպտիմ այն ուրախ օրերուն յուշերով երբ օթօպիւսներով քաղաքէ քաղաք հիւրախաղերու եւ կամ մարզական մրցումներու կ'երթային պատանի-երիտասարդները, կը ծնէին փոքրիկ սէրեր՝ որոնք երբեմն ալ խոր ու հաստատ սիրով կը շարունակուէին եւ ամուսնութեամբ կը կնքուէին:

Այս էջերուն հետ ...կը լիշեմ տողերը բանաստեղծին- «Ու մերթ լացաւ ու մերթ խնդաց իմ հոգին...»

Յակոբ գողտրիկ պատկերով մը «Մեծ Մանուկը» ( էջ 160-161) վերնագրով կը նկարագրէ այն փոքրիկ մանչուկին վիճակը որ այդքան փոքր հասակին շոքոյս չի կրնար ուսել որովհետեւ շաքարախտ ունի, եւ երեք անգամ ինսուլին ներարկուելու ստիպուած է...

«Ցաւը ինչպէ՞ս կը մեծցնէ եղեր մէկը, հասուն կը դարձնէ, կը կոփէ, կ'ամբարցնէ...» կ'եզրափակէ Յակոբ Միքայէլեանը: Հասունութիւնը եթէ չափանիշ մը ունի, Հայկալահայունը ուր հասած է՞:

Ի՞նչպէս չմտածել բոլոր այն մանուկներուն մասին որ այսօր հինգ տարիէն աւելի Հայկալի դժոխային կեանքին մէջ կ'ապրին: Ինսուլինի տեսակ մը կա՞յ որ մեղմացնէ անոնց ցաւը:

«Երբ այսքան անպէտ ու անկարելոր կը դառնայ մարդը աշխարհի «Տէրեր»-ուն ձեռքը», քանի-քանի Հայկալահայ տաղանդներ իրենց արուեստով դեռ քանի-քանի մղոններ պէտք է կտրեն հանգրուանելու եւ վայելելու իրենց արժանի տեղը:

էջ առ էջ կարդալով Յակոբ Միքայէլեանին «Աշնանային Համանուագը» Հայկալն է որ կենդանի կը տողանցէ աչքիս առաջ եւ կրկին հարց կու տամ...

Ո՞վ պիտի գրէ Հայկալի ամբողջական պատմութիւնը- եւ ո՞ւր է Հայկալահայուն տեղը:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----

Address:-----

City:----- State:----- Zip Code:-----

Country:-----

Tel :----- Email:-----

ՓՈՐՏՈՒԿԱԼԻԱՆ՝ ՖՈՒՏՊՈՒԻ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՒՈՅԵԱՆ



Փորտուգալիայի հաւաքականը պատմութեան մէջ առաջին անգամ հռչակուեց ֆուտպոլի Եւրոպայի ախոյեան:

Փորթուգալիայի հաւաքականը ֆուտպոլի 2016 թուականի Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ խաղում յաղթեց Ֆրանսայի ազգային թիմին:

Չնայած կոլային պահերի առատութեանը, հանդիսատեսները հիմնական ժամանակում կոլերի ակնատես չդարձան: Իսկ լրացուցիչ երկրորդ խաղակէսի 109-րդ րոպէին փորտուգալացիները կիսապաշտպան էդերը հեռահար հարուածով անակնկալի բերեց ֆրանսացիների դարպասապահ Լիորիսին:


Այդպիսով, Փորթուգալիայի ընտրանին լրացուցիչ ժամանակում 1:0 հաշուով յաղթեց դաշտի տէրերին եւ իր պատմութեան մէջ առաջին անգամ նուաճեց Եւրոպայի ախոյեանի կոչումը: Իսկ ահա Ֆրանսայի ընտրանին առաջին անգամ պարտուեց Եւրոպայի առաջնութեան եզրափակիչում:

Խաղից յետոյ Փորթուգալիայի համակիրները անկարգութիւններ են իրականացրել Փարիզի կեդրոնում, իսկ ոստիկանութիւնը ստիպուած է եղել կիրառել արդիւնաբեր կազ:

ԱՆՏՈՒԱՆ ԳՐԻՉՍԱՆԸ՝ ԵՐՐՈ-2016-Ի ԼԱԻԱԳՈՅՆ ՌՍԲԱՐԿՈՒ

Ֆրանսայում աւարտուած ֆուտպոլի Եւրոպայի առաջնութեան լաւագոյն ռմբարկու ճանաչուեց Ֆրանսայի հաւաքականի յարձակող Անտուան Գրիզմանը:

Մադրիդի «Աթլետիկոյի» ֆուտպոլիստը 7 խաղում խփեց 6 կոլ եւ դարձաւ 2 կոլային փոխանցման հեղինակ՝ արժանանալով «Ոսկէ խաղակոշիկին»: Ռմբարկուների ցուցակում 2-7-րդ տեղերը բաժանեցին պորտուգալացիներ Կրիշտիանու Ռոնալդուն ու Լուիշ Նանին, ֆրանսացիների Օլիվիէ Ժիրոն եւ Դիմիտրի Պայետը, ուելսցի Գարեթ Բեյլը եւ սպանացի Ալվարո Մորատան, որոնք դարձել են 3-ական կոլի հեղինակ: Ռոնալդուն ճանաչուեց երկրորդը եւ ստացաւ «Արծաթէ խաղակոշիկը», քանի որ դարձել է նաեւ 3 կոլային փոխանցման հեղինակ: 2 կոլային փոխանցում կատարած Օլիվիէ Ժիրոն բաժին հասաւ «Պրոնզէ խաղակոշիկը»:



ԵՆԴԻ ՄԱՐԵՅԸ՝ ՈՒՍԲԸՆԻ ՎՐԱՆԿԻ ՅԱՂԹՈՂ

Բրիտանացի էնդի Մարեյը երկրորդ անգամ նուաճեց թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի տղամարդկանց մենախաղի յաղթողի տիտղոսը՝ կրկնելով 2013-ի յաջողութիւնը:

Եզրափակիչում 29-ամեայ թենիսիստը 3 սեթում առաւելութեան հասաւ կանադացի Միլոշ Ռաոնիչի նկատմամբ: 2 ժամ 50 րոպէ տեւած մրցախաղում գրանցուեց 6:4, 7:6, 7:6 հաշիւը:

Սա Մարեյի երրորդ յաղթանակն էր «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում: 2012-ին նա յաղթել էր նաեւ US Open-ում: 25-ամեայ Ռաոնիչն առաջին անգամ խաղաց «Մեծ սաղաւարտի» մրցաշարի եզրափակիչում:

Այս տարի Ուիմբլդոնի յաղթողի տիտղոսը չպաշտպանեց աշխարհի առաջին ռակետ Նովակ Ջոկովիչը, որը երրորդ շրջանում սենսացիոն պարտութիւն կրեց ամերիկացի Մեմ Կուերիից:

Աշխարհի առաջին ռակետ Սերենա Ուիլիամսը նուաճեց Ուիմբլդոնի կանանց մրցաշարի յաղթողի տիտղոսը: Եզրափակիչում ամերիկացի մարզուհին 7:5, 6:3 հաշուով պարտութեան մատնեց գերմանացի Անժելիկա Կերբերին:



ՋԵՆՐԻԻՆ ՄԻՒԹԱՐԵԱՆԸ ԿԸ ԽԱՂԱՅ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԽՈՒՄԲԻՆ ԴԵՄ

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինիոն ներկայացրել է խումբի նախապատրաստական ծրագիրը:

Ըստ դրա խումբը կը սկսի լիարժէք մարզումներ անցկացնել Յուլիսի 11-ից: Հինգօրեայ պարապմունքներից յետոյ «Մանչեսթեր Եունայթեդը» Յուլիսի 16-ին ընկերական խաղ կ'անցկացնի «Ուիգանի» հետ: Ժոզէ Մուրինիոն յայտարարել է, որ այդ հանդիպմանը կը մասնակցեն միայն իր ձեռքի տակ եղած ֆուտպոլիստները: Պատճառն այն է, որ խումբի 14 ֆուտբոլիստներ, որոնք տարբեր հաւաքականների կազմում մասնակցել են Եւրոպայի առաջնութեանն ու Ամերիկայի Գաւաթի խաղարկութեանը, խումբին միանալու են աւելի ուշ:



Այնուհետեւ, «Մանչեսթեր Եունայթեդը» կը մեկնի Չինաստան, որտեղ կը մասնակցի միջազգային մրցաշարի: Ի դէպ, վերջինիս շրջանակում անգլիական ակումբը հանդիպելու է Դորտմունդի «Բորուսիայի» եւ իր ամենակրթունքային մրցակցի՝ «Մանչեսթեր Սիթիի» հետ: Դա նշանակում է, որ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը կը խաղայ իր նախկին խումբի դէմ:

Օգոստոսի 3-ին «Մանչեսթեր Եունայթեդը» նոր մրցաշրջանի մեկնարկից առաջ կ'անցկացնի առաջին հանդիպումը սեփական մարզադաշտում՝ «Օլդ Տրաֆորդում»: «Կարմիր սատանաները» բարեգործական խաղ կ'անցկացնեն Ուէյն Ռուսիի նախկին խումբի՝ Լիվերպոլի «Էվերտոնի» հետ:

Օգոստոսի 7-ին Հենրիխ Մխիթարեանը «Մանչեսթեր Եունայթեդի» կազմում կը պայքարի նոր մրցաշրջանի առաջին մրցանակի՝ «Կոմիւնիթի Շիլդսի» համար: Նրա եւ միւս խաղընկերների մրցակիցները կը լինեն Անգլիայի այս տարուայ ախոյեանները՝ «Լեսթերի» ֆուտպոլիստները:

ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԿՈԼԸ ՓՐԿԵԼ Է «ՌԵԱԼ ՍՈԼՈ ԼԵՅԲԻՆ»

MLS-ի կանոնաւոր առաջնութեան հերթական տուրում ամերիկեան «Ռեալ Սոլթ Լէյքը» 1:1 հաշուով է աւարտել կանադական «Մոնրեալ Իմփեքթի» դէմ տնային խաղը:

Հիւրերը հաշիւը բացել են 8-րդ րոպէին, իսկ «Ռեալ Սոլթ Լէյքը» պատասխան կողմը 79-րդ րոպէին 11 մեթրանոցից խփել է Եուրա Մովսիսեանը: Հայ յարձակողը մասնակցել է ամբողջ խաղին եւ 7-րդ կոլը խփել MLS-ի ընթացիկ առաջնութիւնում:

18 խաղ անցկացրած «Ռեալ Սոլթ Լէյքը» 29 միաւորով Արեւմտեան գոտու երրորդ տեղում է:

Յիշեցնենք, որ 28-ամեայ Մովսիսեանը ճանաչուել էր MLS-ի Յունիս ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստ::



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՉԿՈՎԸ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՅԱՂԹՈՂ

Բռնցքամարտի Հայաստանի հաւաքականի անդամ, 64 կգ քաշային Յովհաննէս Բաչկովը նուաճել է վեներուելայում անցկացուող Ռիօ-2016-ի վերջին օլիմպիական վարկանիշային մրցաշարի յաղթողի կոչումը՝ քաթարցի մրցակցին նուկաստի ենթարկելով երրորդ ռաունդում:

Յովհաննէս Բաչկովը օլիմպիական ուղեգիրն ապահովել էր կիսաեզրափակիչում տարած յաղթանակի շնորհիւ: Հայկական բռնցքամարտի պատմութեան մէջ առաջին անգամ Հայաստանն օլիմպիական ուինգ դուրս կը գայ հինգ մասնակիցներով:

Բաչկովից առաջ ուղեգրեր էին նուաճել 49 կգ քաշային Արթուր Յովհաննէսեանը, 52 կգ քաշային Նարեկ Աբգարեանը, 56 կգ քաշային Արամ Աւագեանը եւ 69 կգ քաշային Վլադիմիր Մարգարեանը:

